

1074

ՅԱՐՈՒԹԻՒՆ Յ. ՊԷՅԱԶԵԱՆ

ԸՆԹԱՑՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

*Բարեփոխեալ ըստ ծրագրոյ եւ յանձնարարութեան
Ուսումնական Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան*

Ի ՊԷՏՍ

Դ. ԴԱՍՈՒ ԱԶԳ. ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԱՑ

معارف عمومية نظارت جلیله سنک فی ۲۳ ذی الحجہ سنہ ۱۳۰۶ و فی ۸ آگستوس
سنہ ۱۳۰۵ تاریخ و ۴۸۱ نومرولو رخصتنامه سیله طبع اولمشدر

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1889



Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ

ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր

Ա. — ՆՈՒՊԱՐ — ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ]

Ն Ո Ւ Ի Ր Է

Նիկոմիդիա

Երախտագէտ սան իւր

28 Յուլիս 1889

ՅԱՐՈՒԹԻՒՆ Յ. ՊԵՅԱԶԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



ԹԻԻ 124

Վ Ա Ի Ե Ր Ա Գ Ի Ր

ՈՒՍՈՒՄ Ն Ա Կ Ա Ն ԽՈՐՀՐԴՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Զդասական Հնրացս Աշխարհագրութեան՝ զոր յօ-
րինեայ է Յարութիւն Էճէնտի Պէյազեան, ի պէտս Դ.
Դասու Ազգային Նախակրթարանաց, յաղագս ամփոփ
բովանդակութեան որ ի նմայն անհրաժեշտ գիտելեաց,
եւ հաւատարիմ համաձայնութեան ընդ առ ի մէջ
հաստատեայ նորոգ Երագրի դպրոցական ուսմանց՝
մտադիւր վաւերացուցանեմք:

Ի դիմաց

Ուսումն. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

ԿՆԻՔ

ՍՏԵՆԱՊԵՏ

Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Երբ Աշխարհագրութեան՝ դասագիրք մը կը նուիրեմք Ազգ. մանկտւոյն, կ'արժէ որ նախ խօսիմք, բացատրելու համար թէ՛ ո՛րպիսի հետաքրքրաշարժ ուսում մ'է Աշխարհագրութիւնն. եւ թէ՛ ո՛րչափ երկրորդական կարեւորութեամբ կը դասախօսուի այս ուսումն դպրոցին մէջ, ա՛յնքան առաւել հարկաւոր է դպրոցէն դուրս: Սակայն դասագրքի մը նեղ էջերուն մէջ զայսցանէ խօսիլ անյարմար՝ մանաւանդ թէ մեզմէ աւելի հմուտ մասնագէտներ բազմիցս գրած ըլլալով, աւելորդ կը համարիմք ծանրանալ այս կէտին վրայ, եւ կը շատանամք դոյզն ինչ խօսիլ միայն գործոյս նկատմամբ:

Արդարեւ Աշխարհագրական գրեանք չէին պակսեր առ մեզ. եւ ստիպողական հարկ մը չկար ուրիշ մ'ալ աւելցնել նոցա վրայ: Սակայն սոյն գործոյն պատրաստութեան շարժառիթն ոչ այլ ինչ է, քայց եթէ Աշխարհագրական դասական (classique) գրեանց պակասութիւնն առ մեզ, զոր դասատուք փորձով կ'զգան դասախօսութեան միջոցին:

Որ եւ է աստիճանի Վարժարանի Աշխարհագրութեան դասատու իւր դասախօսութեան յանձնուած քանի մը Դասեր ունի անշուշտ, որոց իւրաքանչիւրն թէ՛ ըստ Ծրագրի Վարժարանին եւ թէ՛ ըստ կարողութեան աշակերտաց անտարակոյս

յոյժ կը տարբերին ի միմեանց : Սակայն նոյն դասախօսն ի ձեռին կ'ունենայ դասագիրք մը, որ իբր Աշխարհագրական գործ լաւ պատրաստուած գործ մ'ըլլալով հանդերձ չհամապատասխաներ իրեն յանձնուած զանազան Դասուց միանգամայն : Այս պատճառաւ կ'ստիպուի միեւնոյն դասագիրքըն կամ իւր բոլոր Դասուց միանգամայն գործածելի ընել, որ քիչ անպատեհութիւն չէ, եւ կամ համառօտելով կամ ընդլայնելով գրաւորապէս դասաւանդել, որ մեծ աշխատութիւն մ'է իրեն համար :

Եթէ առանց դասագիրք տալու մեր աշակերտաց ձեռք, ո' եւ է աստիճանի դասագիրք մը համառօտելով կամ ընդլայնելով դասախօսելու դրութիւնը մեր վարժարանաց մէջ մուտ գտած եւ ընդհանրացած ըլլար, զանազան աստիճաններու բաժնուած դասագրքերու պէտքն զգալի չէր լիներ անշուշտ, զի յայնժամ հմուտ դասախօս մը իւր ձեռքն ունեցած մի տեսակ դասագիրքն կարող էր յարմարցնել իւր բոլոր Դասուց միանգամայն : Բայց քանի որ մեր վարժարանաց մէջ աշակերտաց իւրաքանչիւրին ձեռքը դասագիրք տալու սովորութիւնը դեռ կայ եւ պիտի մնայ ժամանակի մը համար եւս, յայնժամ զգալի կը լինի նաեւ պէտք մը, որ է՝ ամէն Դասուց համար իւր կարողութեան աստիճանին համեմատ դասագիրք ունենալ :

Ահա այս թերին, եթէ երբէք կարելի է թերութիւն համարել, մերովսանն լրացնելով, Պատ. Դասախօսաց դիւրութիւն մ'ընծայելու, եւ այս կեր-

պիւ Ովկիանոսի մէջ Թափուած կաթիլ մը ջրոյնըման Ազգային յառաջադիմութեան ընդարձակ գործին դոյզն ծառայութիւն մ'ըրած ըլլալու փափաքով, պատրաստած եմք սոյն *Աշխարհագրութեան Ընթացքն* որ տարիներու բաժնուած՝ եւ մին քան զմիւսն աւելի ճոխ եւ աւելի ընդարձակ է :

Այսու նոր գործ մը ի լոյս բերած կամ անթերի աշխատութիւն մը կատարած ըլլալու յաւակնութիւնը չեմք սնուցաներ ի մեզ. վասն որոյ սիրելի է մեզ յուսալ որ Յարգոյ ընթերցողք ներողամիտ աչօք կը նային այն թերութեանց եւ սխալանաց, որք յակամայս սպրդած են սոյն գործին մէջ :

Բ. Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Աշխարհագրութեան Ընթացքիս Ա. Տարւոյն սոյն Բ. Տպագրութիւնն առաւել օգտակար ընծայելու փափաքանօք պատշաճ համարեցինք բարեփոխումներ ներմուծել անդ, յանձնարարութեամբ կեդր. Ուսումն. Խորհրդոյ եւ հետեւողութեամբ իւր Ծրագրոյն, զոր գծած է նորոգապէս :

Ըստ այսմ Եւրոպական Թուրքիա, Ասիական Թուրքիա, Եգիպտոս, եւ այլն, որք Օսմանեան Կայսրութիւնը կազմող երկիրներն են, եւ զորոց Ա. Տպագրութեան մէջ համառօտիւ իմն խօսուած էր, նման միւս տէրութեանց, ի մի հաւաքեցինք, եւ Խօսեցանք ա՛յնպէս, եւ ա՛յն ընդարձակութեամբ, որպէս կը տրամադրէր Ծրագիրն, որոց համեմատ

ուսանողն Առաջին Տարւոյն մէջ իսկ պարտի ուսանիլ երկիրն , որ իւր հայրենիքն է , ուր կը բնակի , եւ զորմէ կը խօսի ամէն օր :

Բաց աստի Ափրիկեան եւ Ամերիկեան երկիրներն համառօտեցինք . կարգ մը երկրորդական գիտելիքներ յապաւեցինք , եւ ուրիշ կարգ մը հարկաւոր գիտելիքներ աւելցուցինք : Թուրքիոյ Հայ Հասարակութեան եւ իւր ներքին Վարչային դրութեան վրայ կարեւոր ծանօթութիւններ տուինք : Թուրքիոյ սահմանակից երկիրներու , այն է՝ Անդրկովկասու եւ Պարսկաստանի վրայ փոքր ինչ ընդարձակօրէն խօսեցանք :

Այս բարեփոխմամբք մեր Ընթացքին Ա. Տարւոյն սոյն Բ. Տպագրութիւնն կատարելապէս կը համապատասխանէ Ուսումն . Խորհրդոյ նոր Ծրագրոյն Դ. Դասուն , ինչպէս կը վկայէ իւր իսկ Վաւերագիրն , զոր զետեղած եմք գործոյս ճակատն :

Ուստի սիրելի է մեզ յուսալ որ Պատ . Ուսուցիչք , Տեսուչք եւ Հոգաբարձութիւնք նոյն համակրանօք եւ նոյն ներողամիտ աչօք պիտի ընդունին նաեւ սոյն երկրորդ Տպագրութիւնն , ինչպէս ընդունեցին Առաջինն , եւ ինչպէս կ'ընդունին այժմ Ընթացքիս Բ. Տարին , որով եւ մեք քաջալերեալ՝ կարող պիտի ըլլամք հետզհետէ ի լոյս ընծայելու Աշխարհագրական ուրիշ գործեր , որք կան ի պատրաստի :

ԲՆԹԱՅՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ



ԳԼՈՒԽ Ա

ՍԱՀՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԻՑ

Հ. Ի՞նչ է Աշխարհագրութիւնը .

Պ. Աշխարհագրութիւնը այն գիտութիւնն է , որ կը սովորեցնէ աշխարհի մէջ գտնուած երկիրներն , քաղաքներն , լեռներն , ծովերն եւ գետերն : Կ'ուսուցանէ թէ՛ այն երկիրներն և քաղաքներն որո՞ւ կը վերաբերին , քանի՞ բնակիչ ունին : Կ'ուսուցանէ թէ՛ ցորենն ո՞ր երկրէն կ'ելլէ , այն ինչ տեսակ պտուղն ո՞ր քաղաքէն կուգայ և այլն :

Հ. Աշխարհագրութիւնը օգտակա՞ր գիտութիւն մ'է .

Պ. Այո՛ . Աշխարհագրութիւնը օգտակար գիտութիւն մ'է : Ինչպէս որ անցեալ տարի սովորեցար , և այսօր գիտես թէ՛ ձեր տան մէջ քանի՞ հո-

գի կայ , և ո՞յք են դոքա . գիտես թէ՛ ձեր տուներ
ո՞ր փողոցին մէջ է , և ձեր փողոցն քաղաքին ո՞ր
կողմը կ'իյնայ . ուսար նաև թէ՛ ձեր քաղաքին մէջ
ո՞րչափ հայր և մայր , ո՞րչափ եղբայր և քոյր կայ ,
այսպէս նաև պէտք է ուսանիս թէ՛ աշխարհի մէջ
ի՞նչ երկիրներ , ի՞նչ քաղաքներ կը գտնուին , այն
երկիրներէն ի՞նչ բերք , և ի՞նչ պտուղ կ'ելլէ , այն
քաղաքաց մէջ ո՞րչափ բնակիչ կայ , և այլն և այլն :

Հ . Կարելի չէ՞ արդեօք այդ ամէն գիտելիքներն
դպրոցէ ելլելէ վերջ այդ երկիրներն այցելելով ու-
սանիլ .

Պ . Ո՛չ . հօրդ և քու ապագայ վիճակդ ո՞րչափ
ալ ներեն , դարձեալ անկարելի է աշխարհի մէջ
գտնուած ամէն երկիրներն այցելել և այս ամէնն
աչքով տեսնելով սովորիլ . ուստի քանի որ դեռ
դպրոցական վիճակի մէջ կը գտնուիս , պարտաւոր
ես սովորիլ , ինչպէս կը սովորիս միւս ուսուցիչներն :

Հ . Կա՛ւ . այժմ համոզուեցայ թէ Աշխարհագր-
ութիւնը օգտակար գիտութիւն մ'է , և պէտք է
դպրոցին մէջ սովորինք . ըսէ՛ ինձ , կ'աղաչեմ , թէ՛
այս ուսուցիչ սովորելու համար ի՞նչ պէտք է ընել .

Պ . Այս ուսուցիչ սովորելու համար պէտք է , ամե-
նայն խնամով հետևիլ Աշխարհագրութեան դասի
յատկացեալ հրահանգաց , լսել և գործադրել մեր
Ուսուցչին տուած բոլոր պարտաւորութիւններն ,
ինչպէս կ'ընեմք միւս բոլոր ուսմանց համար :

Հ . Ես պատրաստ եմ այդպէս ընելու . այսօր-
ուան առաջին դասերնիս ի՞նչ է .

Պ . Այս աւուր առաջին դասերնիս է . սովորիլ Աշխարհագրական Բառերն , և նոցա Սահմաններն :

Հ . Աշխարհագրական Բառ ըսելով ի՞նչ կը հասկընաս .

Պ . Աշխարհագրական Բառ ըսելով կը հասկնամ այն բառերն , որոնք Աշխարհագրութեան մէջ կը գործածուին : Ինչպէս ամէն արհեստ իւր բառերն ունի , ինչպէս ամէն արհեստաւոր իւր արհեստին բառերն կը գործածէ , նոյնպէս Աշխարհագրութիւնն ունի իւր բառերն զորս պէտք է գիտնալ :

Հ . Որո՞նք են Աշխարհագրական բառերն .

Պ . Աշխարհագրական Բառից գլխաւորներն են . Երկիր , Ծով , Ովկիանոս , Յամախ , Գետ , Լիւն , Նեղուց , Ծոց , Կղզի , Թերակղզի , Պարանոց , Լեզու , Լեռ , Կողմունի Աշխարհի , Աշխարհացոյց Տախտակ , Գիւղ , Քաղաք , Մայրաքաղաք , Տէրութիւն :

Հ . Աշխարհագրական Բառից Սահման ըսելով ի՞նչ կ'իմանաս .

Պ . Աշխարհագրական Բառից Սահման ըսելով կ'իմանամ այն բառերուն՝ Աշխարհագրութեան մէջ ունեցած նշանակութիւնը : Եթէ բառ մը այս ինչ գիտութեան մէջ այս ինչ նշանակութիւնն ունի , ուրիշ գիտութեան մը մէջ նոյն նշանակութեամբ չը գործածուիր . այլ ունի տարբեր նշանակութիւն մը , զոր պէտք է գիտնալ :

Օրինակաւ մը բացատրեմ ըսածս . Լեզու ըսելով մեր հասարակ խօսակցութեան մէջ կը հասկնամք այն լեզուն , որ ամէն մարդ ունի իւր բերնին մէջ ,

Հ. Նեղուցն ի՞նչ է .

Պ. Նեղուցն ծովու այն նեղ մասն է , որ երկու ցամաքներ իրարմէ կը բաժնէ , և երկու ծովեր իրարու հետ կը միացնէ :

Հ. Ծոցն ի՞նչ է .

Պ. Ծոցն ծովու այն փոքր մասն է , որ ցամաքին մէջ մտած է :

Հ. Կղզի ըսելով ի՞նչ կը հասկնաս .

Պ. Կղզի ըսելով կը հասկնամ հողի այն մասն , որ ճիշդ ցամաք է , բայց ծովու մէջ կը գտնուի , և ամէն կողմանէ ծովով շրջապատուած է : Կղզին լրճին ճիշդ հակառակն է :

Հ. Թերակղզին ի՞նչ է .

Պ. Թերակղզի է այն կղզին , որ մէկ կողմէն ուրիշ ցամաքի հետ կցուած է .

Հ. Պարսնոցն ի՞նչ է :

Պ. Թերակղզւոյ մը ցամաքին հետ կցուած հողի մասն Պարսնոց է :

Հ. Լեզու ըսելով ի՞նչ կը հասկնաս .

Պ. Լեզու ըսելով կը հասկնամ ցամաքի այն սուր մասն , որ դէպ ի ծով յառաջացած է , և լեզուի ձեւ մ'ունի :

Հ. Հրուանդան կոչուածն ի՞նչ է .

Պ. Այն լեզուն , որ լեռնային է , կը կոչուի Հրուանդան :

Հ. Լեռն ի՞նչ է .

Պ. Լեռն ցամաքի այն մասն է , որ դէպ ի վեր բարձրացած է , և կոյտ մը կը ձեւացնէ :

Հ. Կողմունք Աժխարհի ըսելով ի՞նչ կը հասկնաս .

Պ. Որ և իցէ տեղւոյ մը ո՞ւր գտնուիլն լաւ որոշելու համար մարգիկ նոյն տեղւոյն բոլորտիքը գտնուած կողմերուն մէկ մէկ անուններ դրեր են : Այս անուններն կը կոչուին Կողմունք Աժխարհի , և գլխաւորաբար չորս են . Արեւելք , Արեւմուտք , Հիւսիս , Հարաւ :

Երբ մարդ մը արեւուն ծագած կողմը նայելով կայնի , իւր ճակատի կողմն՝ Արեւելք , ետին՝ Արեւմուտք , ձախ կողմն՝ Հիւսիս , աջ կողմն՝ Հարաւ է (1) :

Հ. Աժխարհացոյց Տախտակ որո՞ւ կ'ըսուի .

Պ. Աժխարհացոյց Տախտակ կ'ըսուին այն պատկերին , որոյ վրայ երկրիս երեսը գտնուած ցամաքներն , ծովերն և ովկիանոսներն զանազան գոյներով , գծերով և նշաններով գծուած են (2) :

Հ. Քանի՞ տեսակ Աշխարհացոյց Տախտակ կայ .

Պ. Երկու տեսակ Աշխարհացոյց Տախտակ կայ . Հարթագունս եւ Մասնագունս :

Հ. Ո՞ր Աշխարհացոյց Տախտակն Հարթագունս է .

Պ. Հարթագունս է այն Աշխարհացոյց Տախտակըն , որոյ վրայ երկու կլոր շրջանակներու մէջ երկրին երեսը գտնուած ցամաքներն , ծովերն և Ովկիանոսներն ամբողջ գտնուած են (3) :

(1) Դասախօսին կը թողուի յԱրեւելս դառնալ և անձամբ անձին ցուցնել Աշխարհի կողմերն :

(2) Յուցո՛ւր Աշխարհացոյց Տախտակներն :

(3) Յուցո՛ւր Հարթագունտն միայն :

Հ. Ո՞ր Աշխարհացոյց Տախտակն Մասնագունն է .

Պ. Մասնագունն է այն Աշխարհացոյց Տախտակն որոյ վրայ երկրիս երեսը գտնուած ցամաքներէն և ծովերէն մաս մը միայն գծուած է (1) :

Հ. Աշխարհացոյց Տախտակի մը ո՞ր կողմն Արեւելք , ո՞ր կողմն Արեւմուտք է .

Պ. Ամէն տեսակ Աշխարհացոյց տախտակի վերի կողմն՝ Հիւսիս , ձախ կողմն՝ Արեւմուտք , վարի կողմն՝ Հարաւ , աջ կողմն՝ Արեւելք է միշտ :

Հ. Գիւղ կոչուածն ի՞նչ է .

Պ. Գիւղ կը կոչուի այն վայրն , ուր մարդիկ շէնքեր և տուներ շինելով կը բնակին :

Հ. Գիւղաբաղաբ , Բաղաբ կոչուածներն ի՞նչ են .

Պ. Մեծ գիւղերն՝ Գիւղաբաղաբ , և մեծ գիւղաբաղաբներն՝ Բաղաբ կը կոչուին :

Հ. Մայրաբաղաբն ի՞նչ է .

Պ. Մայրաբաղաբ կ'ըսուի այն քաղաքին , ուր կը նստի երկրին տէրն , և կառավարութեան գործերն կարգադրող անձինք :

Հ. Տէրութիւն ըսուածն ի՞նչ է .

Պ. Տէրութիւն կ'ըսուի այն իշխանութիւնը , որ իւր հրամանին տակ ունի երկիրներ և ժողովուրդներ , հաստատած է յատուկ կարգեր և օրէնքներ , որոնցմով կը կառավարէ իւր երկիրն և ժողովուրդն :

(1) Յուցո՛ւր Մասնագունտն միայն :

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ. Երկրիս երեսին ո՞րչափը ցամաք և ո՞րչափը ծով է .

Պ. Երկրիս երեսը եթէ չորս մասի բաժնեմք երեք մասն՝ ծով, իսկ մնացած մէկ մասն ցամաք է գրեթէ :

Հ. Երկրիս երեսը գտնուած ցամաքն քանի՞ն՞ կը բաժնուի .

Պ. Երկրիս երեսը գտնուած ցամաքն կը բաժնուի հետեւեալ հինգ մասանց .

ՄԱՍՆ Ա. ԵՒՐՈՊԱ

ՄՅՍՆ Բ. ԱՍԻԱ

ՄԱՍՆ Գ. ԱՓՐԻԿԷ

ՄԱՍՆ Դ. ԱՄԵՐԻԿԱ

ՄԱՍՆ Ե. ՈՎԿԻԱՆԻԱ

Եւրոպա, Ասիա և Ափրիկէ երկար ժամանակէ ի վեր ծանօթ ըլլալով, կը կոչուին շին ԱՇԽԱՐՀՔ . իսկ Ամերիկա և Ովկիանիա դեռ նոր գտնուած ըլլալով, կը կոչուին ՆՈՐ ԱՇԽԱՐՀՔ :

Հ. Երկրիս երեսը գտնուած ծովերն քանի՞ն՞ կը բաժնուին .

Պ. Երկրիս երեսը գտնուած ծովերն կը բաժնուին հետեւեալ հինգ մասանց, որք անհուն ընդարձակութիւններ ունենալով, ինչպէս վերը սով-

րեցանք, կըկոչուին Ովկիանոս.

Ա. ՇԻՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՑԵԱԼ ՈՎԿԻԱՆՈՍ, որ Եւրոպիոյ, Ասիոյ և Ամերիկայի Հիւսիսային կողմն է:

Բ. ՇԱՐԱԻԱՅԻՆ ՍԱՌՈՒՑԵԱԼ ՈՎԿԻԱՆՈՍ՝ Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսին ճիշդ հակառակ կողմն է:


Գ. ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՍ՝ Եւրոպիոյ և Ափրիկէի Արեւմտեան՝ և Ամերիկայի Արեւելեան կողմն է:

Դ. ԽԱՂԱՂԱԿԱՆ ՈՎԿԻԱՆՈՍ՝ Ասիոյ Արեւելեան՝ եւ Ամերիկայի Արեւմտեան կողմն է:

Ե. ՇՆԴԿԱՑ ՈՎԿԻԱՆՈՍ՝ Ասիոյ Հարաւային՝ և Ափրիկէի Արեւելեան կողմն է:

Զ. Աշխարհի հինգ մասանց բնակչաց թիւն որչափ է.

Պ. Աշխարհի հինգ մասանց բնակչաց թիւն է
1.380.000.000 :



Գ Լ ՈՒ Խ Բ



Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ե Ի Ր Ո Պ Ա

Հ. Եւրոպիոյ սահմաններն որո՞նք են .

Պ. Եւրոպիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոս . Արեւմուտքէն՝ Ատլանտեան Ովկիանոս . Հարաւէն՝ Միջերկրական ծով և Սև ծով . Արեւելքէն՝ Ասիա :

Հ. Եւրոպիոյ մէջ քանի՞ Տէրութիւն կայ .

Պ. Եւրոպիոյ մէջ կայ տասնեւութ Տէրութիւն, որք հետեւեալներն են .

ԱՆԳՂԻԱ, ՖՌԱՆՍԱ, ԳԵՐՄԱՆԻԱ, ԵԻՐՈՊԱԿԱՆ ՌՈՒՍԻԱ, ԱԻՍՏՐԻԱ – ՀՈՒՆԳԱՐԻԱ, ԻՏԱԼԻԱ, ԵԻՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ, ՍՊԱՆԻԱ, ՓՈՐԹՈՒԿԱԼ, ՏԱՆԸՄԱՐԳԱ, ՇՈՒԷՏ – ՆՈՐՎԵԿԻԱ, ՀՈԼԱՆՏԱ, ՊԵԼՃԻԳԱ, ԶՈՒԻՅԵՐԻԱ, ՅՈՒՆԱՍՏԱՆ, ՌՈՒՄԱՆԻԱ, ՍԵՐՊԻԱ, ԳԱՐԱՏԱՂ :

Հ. Եւրոպիոյ բնակիչն որչափ է .

Պ. Եւրոպիոյ բնակիչն է 330,000,000 :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր ծովերն որո՞նք են .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր ծովերն են .

Պալթիկ ծով, Հիւսիսային ծով, Իռլանդացի ծով,
Մանչի ծով, Ֆրանսական ծով, Միջերկրական ծով,
որոնք Ատլանտեան Ովկիանոսէն կազմուած են :
Ադրիական ծով, Յոնիական ծով, Արշապեղագոս,
Մարմարա, Սել ծով՝ Միջերկրական ծովէն կազ-
մուած են :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր ծոցերն որո՞նք են .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր ծոցերն են .

Պօթնեան ծոց, Ֆինլանդիոյ ծոց՝ Պալթիկ ծովէն
կազմուած են : Զիւիսէր-Չէի ծոց՝ Հիւսիսային ծո-
վէն կազմուած է : Իարէնդի ծոց, Կորնթոսի ծոց,
Յոնիական ծովէն կազմուած են : Աթենայ ծոց՝ Մի-
ջերկրական ծովէն կազմուած : Սելանիկի ծոց՝ Ար-
շապեղագոսէն կազմուած : Ոսկեղջիւր՝ Մարմարայէն
կազմուած է :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր լիճերն որո՞նք են, և ո՞ր
երկիրներուն մէջ կը գտնուին .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր լիճերն են .

Լաւօկա, Օնէկա՝ Եւրոպական Ռուսիոյ մէջ են :
Վէնէր, Վէթեր՝ Շուէտի մէջ : Նէովաթէլ, Փը-
նէվ, Յուրիխ՝ Զուիցերիոյ մէջ : Նէօգիէսլ, Պալա-
թոն՝ Աւստրիոյ մէջ : Մաժէօն, Կարսա՝ Իտալիոյ մէջ :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր նեղուցներն որո՞նք են .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր նեղուցներն են .

Սֆակէր-Բագ, Քաթէկադ, որոնք Հիւսիսային և
Պալթիկ ծովերն իրարու կը միացնեն : Բա-սը-Գալէ՝
Հիւսիսային և Մանչի ծովերն իրարու կը միացնէ :
Ճիպրալթար՝ Ատլանտեան Ովկիանոսն Միջերկրա-

կանի հետ կը կցէ , և Եւրոպական Ափրիկէէն կը բաժնէ : Տարսանել (Չանաֆ-Գալէ)՝ Մարմարայի և Արշիպեղազոսի մէջ : Վոսփոր՝ Սեւ և Մարմարա ծովերուն մէջ :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր գետերն որո՞նք են և ո՞ւր կը թափին .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր գետերն են .

Բէչորա , որ Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսի մէջ կը թափի : Նէվա , Տուրա , Վիսթուլ՝ Պալթիկ ծովը կը թափին : Էլպա , Ռէն , Թայմզ՝ Հիւսիսային ծովը կը թափին : Սէն՝ Մանչի ծովը կը թափի : Կառոն , Տակո՝ Ատլանտեան Ովկիանոսը կը թափին : Ռոն՝ Միջերկրական ծովը կը թափի : Բո , Ասինէ՝ Ադրիական ծովը կը թափին : Իանուբ , Տնիէբէր՝ Սև ծովը կը թափին : Վոլկա , Ուրալ՝ Կասպից ծովը կը թափին :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր կղզիներն որո՞նք են , և ո՞ր ծովերուն մէջ կը գտնուին .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր կղզիներն են .

Սփիցպէրկ , Վայկագ , որք Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսին մէջ են : Լոֆոսէնի կղզիք , Մեծն Բրիտանիա , Իռլանտա , Իսլանտա՝ Ատլանտեան Ովկիանոսին մէջ : Ալանտ , Էօզէլ , Կոթլանտ , Օլանտ , Լալանտ , Ջելանտ , Ֆիոնիա՝ Պալթիկ ծովուն մէջ : Պալէարեան կղզիք , Գորսիֆա , Սարսենիա , Սիկիլիա , Մալթա՝ Միջերկրական ծովուն մէջ : Նէկրէբոնդ՝ Արշիպեղազոսի մէջ : Բորֆու , Բէֆալոնիա՝ Յոնիական ծովուն մէջ :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր թերակղզիք ո՞յք են .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր թերակղզիներն են .

Սքանճինալեան թերակղզի , որ Շուէտ-Նորվեկիայէ կը բաղկանայ : Իանիական թերակղզի , որ կը պարունակէ զՏանըմարգա : Պիրէնեան թերակղզի՝ Սպանիայէ և Փորթուկալէ բաղկացեալ է : Ապենինեան թերակղզի՝ Իտալիայէն կը բաղկանայ : Պալֆանեան թերակղզի՝ Եւրոպական Թուրքիայէ կը բաղկանայ : Մօրէա՝ Միջերկրականի մէջ : Խրիմ՝ Սեւ ծովու մէջ է :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր պարանոցներն որո՞նք են .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր պարանոցներն են .

Կորնթոս , որ Մօրէան Յունաստանի հետ կը միացնէ : Բէրէնք՝ Խրիմը Եւրոպական Ռուսիոյ հետ կը միացնէ :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր հրուանդաններն ո՞յք են .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր հրուանդաններն են .

Նորս-Քին՝ Շուէտի Հիւսիսային եզեր վրայ է : Լանսու-էնս՝ Մեծն Բրիտանիոյ եզեր վրայ : Լահոմ՝ Ֆռանսայի Հիւսիսային եզեր վրայ : Ֆինիսքէր՝ Սպանիոյ Արեւմտեան կողմն : Սուրբ Վիչենցիոս՝ Փորթուկալի Արեւմտեան կողմն : Թրաքալիար՝ Սպանիոյ Հարաւային եզեր վրայ : Սքարթիվէնթօ՝ Իտալիոյ Հարաւային եզեր վրայ : Էմինէ՝ Եւրոպական Թուրքիոյ Արեւելեան եզեր վրայ :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր լեռներն որո՞նք են .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր լեռներն են .

Քէօլէն կամ Սփանսիցապեան լերինք՝ Շուէտ-
 նորվէկիոյ մէջ : Պիրէնեան լերինք՝ Ֆուանսայի ,
 և Սպանիոյ սահմանաց վրայ : Ալպեան լերինք՝ Ֆը-
 ոանսայի , Իտալիոյ և Զուիցերիոյ սահմանաց վրայ :
 Ապենինեան լերինք՝ Իտալիոյ մէջ : Գարբաթեան
 լերինք՝ Աւստրիոյ մէջ : Պալֆանեան լերինք՝ Եւ-
 րոպական Թուրքիոյ մէջ : Ուրալ լերինք՝ Եւրոպա-
 կան Ռուսիոյ Արեւելեան կողմը : Կովկաս լերինք՝
 Եւրոպական Ռուսիոյ Հարաւային կողմը :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր հրաբուլխներն ո՞րք են .

Պ. Եւրոպիոյ գլխաւոր հրաբուլխներն են .

Վեսուվ՝ Իտալիոյ մէջ : Էսնա՝ Սիկիլիոյ մէջ :

Հէֆլա՝ Իսլանտայի մէջ է :



Տ Է Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ք Ե Ի Ր Ո Պ Ի Ո Յ

Ա Ն Գ Ղ Ի Ա

Հ. Անգղիա Եւրոպիոյ ո՞ր կողմը կ'իյնայ .

Պ. Անգղիա Եւրոպիոյ Արեւմտեան կողմը կ'իյ-
 նայ :

Հ. Անգղիոյ սահմաններն որո՞նք են .

Պ. Անգղիոյ սահմաններն են . Հիւսիսէն և Ա-
 րեւմուտքէն՝ Ատլանտեան Ովկիանոս . Հարաւէն՝
 Մանչի ծով . Արեւելքէն՝ Հիւսիսային ծով :

Հ. Անգղիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ. Անգղիոյ բնակիչն է 36,000,000 :

Հ. Անգղիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Անգղիոյ մայրաքաղաքն է ԼՕՆՏՐԱ՝ թայմզ գետին երկու եզերաց վրայ շինուած վաճառաչահ քաղաք մ'է : Ունի 3,820,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են . Լիվըրբուլ, Մանչեսթըր, Էսթմպուրկ, Կլասկօ, Տըպլին :

Հ. Անգղիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Անգղիա վաճառականութեան կողմանէ եւրոպիոյ Տէրութեանց մէջ առաջինն է . վաճառականական նաւուց թիւը 4000ի կը հասնի : Լիվըրբուլ քաղաքն աշխարհի ամէն երկիրներու հետ վաճառականութեամբ հաղորդակցութեան մէջ է :

Անգղիոյ մէջ կառուղիք եւ երկաթուղիք ա՛յնչափ շատ են որ ճանապարհորդք մօտաւոր տեղերն անգամ կառքով կ'երթեւեկեն : Լօնտրայի մէջ հետիոտն երթեւեկութիւնը սովորութիւն չէ :

ՖՐԱՆՍԱ

Հ. Ֆրանսայի սահմաններն որո՞նք են .

Պ. Ֆրանսայի սահմաններն են . Հիւսիսէն՝ Պելճիզա և Մանչի ծով . Արեւմուտքէն՝ Ատլանտեան Ովկիանոս . Հարաւէն՝ Սպանիա և Միջերկրական ծով . Արեւելքէն՝ Իտալիա, Զուիցերիա և Գերմանիա :

Հ. Ֆրանսայի բնակիչն ո՞րչափ է .

Պ. Ֆրանսայի բնակիչն է 37,700,000 :

Հ. Ֆռանսայի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Ֆռանսայի մայրաքաղաքն է ՓԱՐԻՋ՝ Սէն գետին երկու եզերաց վրայ շինուած գեղեցիկ քաղաք մ'է : Ունի 2,270,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են . Մարսէյլ , Պորսո , Լիօն , Թուլօն , Նանդ , Գալէ :

Հ. Ֆռանսայի բնակչաց և երկրին վրայ ի՞նչ գիտես .

Պ. Ֆռանսացիք հայրենասէր , վառվռուն և ազատ մարդիկն են . ամէն բանէ վեր կը դասեն իրենց հայրենիքն : Իւրեանց այս յատկութեամբ մեծ համբաւ հանած են : Ֆռանսացւոց լեզուն համաշխարհային լեզու մը դարձած է :

Ֆռանսայի մէջ արհեստք խիստ ծաղկեալ վիճակ մ'ունին : Մայրաքաղաքն՝ Բարիզ նորաձեւութեան , զարդու և զեղխութեան վերաբերեալ նիւթոց մասին աշխարհի առաջին քաղաքն է :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Հ. Գերմանիոյ սահմաններն որո՞նք են .

Պ. Գերմանիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Պալթիկ ծով , Տանըմարգա և Հիւսիսային ծով . Արեւմուտքէն՝ Հոլանտա , Պէլճիգա և Ֆռանսա . Հարաւելէն՝ Զուիցերիա և Աւստրիա . Արեւելքէն՝ Եւրոպական Ռուսիա և Աւստրիա :

Հ. Գերմանիա ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ .

Պ. Գերմանիա կը բաղկանայ 26 երկիրներէ , որոց գլխաւորներն են . ԲՐՈՒՍԻԱ , ՊԱՎԵՐԻԱ , ՍԱՔՍՕՆԻԱ .

Հ. Գերմանիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ. Գերմանիոյ բնակիչն է 45,300,000 :

Հ. Գերմանիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն ո՞յք են .

Պ. Գերմանիոյ մայրաքաղաքն է ՊԵՐԼԻՆ՝ ունի 1,122,000 բնակիչ : Գլխաւոր քաղաքներն են . Տան-ձիկ , Համպուրկ , Միւնիխ , Տրէզսա , Պաս :

Հ. Գերմանիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Գերմանիա ուսմանց և գիտութեանց կողմանէ Եւրոպիոյ յառաջագէտ երկիրներէն մին է . ունի բազմաթիւ վարժարաններ և համալսարաններ : Այս երկրին մէջ մանկանց կրթութիւնն ա՛յնքան յառաջ գացած է որ ամէն քաղաքի մէջ մանկավարժական դպրոցներ հաստատուած են :

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌՈՒՍԻԱ

Հ. Եւրոպական Ռուսիա ո՞ր երկիրներէ կը բաղկանայ .

Պ. Եւրոպական Ռուսիա կը բաղկանայ Եւրոպիոյ Հիւսիսային Արեւելեան կողմը գտնուած ընդարձակածաւալ երկիրներէն :

Հ. Եւրոպական Ռուսիոյ սահմաններն որո՞նք են .

Պ. Եւրոպական Ռուսիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոս . Արեւմուտքէն՝ Շուէտ-Նորվեգիա , Պալթիկ ծով և Ասիական Թուրքիա . Արեւելքէն՝ Կասպից ծով և Ասիական Ռուսիա :

Հ. Եւրոպական Ռուսիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ . Եւրոպական Ռուսիոյ բնակիչն է 85,000,000 :

Հ . Եւրոպական Ռուսիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ . Եւրոպական Ռուսիոյ մայրաքաղաքն է ՍԷՆ ՓԵՏԵՐՍՊՈՒՐԿ՝ նէվա գետին վրայ շինուած գեղեցիկ քաղաք մ'է : Բնակչաց թիւն է 900,000 :

Գլխաւոր քաղաքներն են . Մոսկուա , Օսեսա , Քազան , Վարշաւիա , Արքանկէլ , Սեւասթափոլ :

Հ . Եւրոպական Ռուսիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ . Եւրոպական Ռուսիա ընդհանրապէս դաշտային երկիր մ'է . միայն Արեւելեան և Հարաւային սահմանաց վրայ կան Ուրալ և Կովկաս լեռներն :

Այս երկրին մէջ՝ մանաւանդ Հիւսիսային կողմը ձմեռն ա՛յն աստիճանի ցուրտ կ'ընէ որ երկար ատեն սառով կը ծածկուի . յայնժամ բնակիչք սառոյցին վրայ բալխիրով կը ձանապարհորդեն , որոց երբեմն շուներ և այծեր կը լծեն :

ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հ . Աւստրիա-Հունգարիոյ սահմաններն ո՞րք են .

Պ . Աւստրիա - Հունգարիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Ռուսիա և Գերմանիա . Արեւմուտքէն՝ Գերմանիա , Զուիցերիա և Իտալիա . Հարաւէն՝ Ադրիական ծով , Եւրոպական Թուրքիա և Ռումանիա . Արեւելքէն՝ Ռումանիա և Եւրոպական Ռուսիա :

Հ . Աւստրիա-Հունգարիա ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ .

Պ . Աւստրիա-Հունգարիա կը բաղկանայ գլխաւորաբար ԱՒՍՏՐԻԱ և ՀՈՒՆԳԱՐԻԱ երկիրներէն , որոնք միանալով կազմած են ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻՈՅ կայսրութիւնը :

Հ . Աւստրիա-Հունգարիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ . Աւստրիա-Հունգարիոյ բնակիչն է 38,000,000 :

Հ . Աւստրիա-Հունգարիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն ո՞յք են :

Պ . Աւստրիա - Հունգարիոյ մայրաքաղաքն է ՎԻԵՆՆԱ՝ Դանուբ գետի եզերքը շինուած , ունի 1,332,000 բնակիչ : Գլխաւոր քաղաքներն են . Փէշդա , Թրիէսդէ , Կրաց , Ակրամ , Փրակա :

Հ . Աւստրիա-Հունգարիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ . Աւստրիա-Հունգարիոյ վաճառականութիւնը օր ըստ օրէ յառաջ կ'երթայ : Արհեստք և ճարտարութիւնք խիստ ծաղկեալ են :

Ի Տ Ա Լ Ի Ա

Հ . Իտալիոյ սահմաններն որո՞նք են .

Պ . Իտալիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Աւստրիա և Զուիցերիա . Արեւմուտքէն՝ Ֆրանսա և Միջերկրական ծով . Հարաւէն՝ Միջերկրական ծով . Արեւելքէն՝ Ադրիական ծով և Աւստրիա :

Հ . Իտալիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ . Իտալիոյ բնակիչն է 29,000,000 :

Հ . Իտալիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ . Իտալիոյ մայրաքաղաքն է ՀՌՈՄ՝ Տիբերիս

գետին եզերքը, եօթն բլուրներու վրայ շինուած նշանաւոր քաղաք մ'է: Ունի 300,000 բնակիչ:

Գլխաւոր քաղաքներն են. Թուրին, Նաբօլի, Վենետիկ, Ֆիորէնցա, Միլան:

Հ. Իտալիոյ վրայ ի՞նչ գիտես.

Պ. Իտալիոյ մէջ մետաքսեղէնի և յախճապակւոյ արհեստներն ծաղկեալ վիճակ մ'ունին: Գեղարուեստներն և երաժշտութիւնն խիստ նշանաւոր են: Այս երկրին օդն ընդհանրապէս տաք է. բայց խոնաւ տեղեր ալ կան, ուր տենդն անպակաս է:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԲԻԱ

Եւրոպական Թուրքիա Օսմանեան կայսրութեան մի մասն ըլլալով, վերջէն պիտի խօսիմք:

ՍՊԱՆԻԱ

Հ. Սպանիոյ սահմաններն որո՞նք են.

Պ. Սպանիոյ սահմաններն են. Հիւսիսէն՝ Յուանսա և Ատլանտեան Ովկիանոս. Արեւմուտքէն՝ Ատլանտեան Ովկիանոս և Փորթուկալ. Հարաւէն՝ Լատլանտեան Ովկիանոս, Ճիպրալթարի նեղուց և Միջերկրական ծով. Արեւելքէն՝ Միջերկրական ծով:

Հ. Սպանիոյ բնակիչն որչափ է.

Պ. Սպանիոյ բնակիչն է 17,000,000:

Հ. Սպանիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են.

Պ. Սպանիոյ մայրաքաղաքն է ՄԱՏՐԻՏ՝ ունի 400,000 բնակիչ: Գլխաւոր քաղաքներն են. Պասսաժօզ, Սարակոսա, Վալասոլիս, Կրանասա:

Հ. Սպանիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Սպանիա ուսմանց , գիտութեանց և արհեստից կողմանէ եւրոպիոյ յետադէմ երկիրներէն մին է :

Սպանիա լեռնոտ երկիր մ'ըլլալով ներսերն բարեխառն կլիմայ մը կը տիրէ . սակայն ծովեզերքն տաք է , և տեղ տեղ փնասակար օդ մը կայ :

Փ Ո Ր Թ Ո Ւ Կ Ա Լ

Հ. Փորթուկալի սահմաններն որո՞նք են .

Պ. Փորթուկալի սահմաններն են . Հիւսիսէն՝ Սպանիա . Արեւմուտքէն և Հարաւէն՝ Ատլանտեան Ովկիանոս . Արեւելքէն՝ Սպանիա :

Հ. Փորթուկալի բնակիչն որչափ է .

Պ. Փորթուկալի բնակիչն է 4,700,000 :

Հ. Փորթուկալի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Փորթուկալի մայրաքաղաքն է ԼԻՋՊՈՆ՝ Տակո գետին բերանը շինուած՝ ունի 275,000 բնակիչ : Գլխաւոր քաղաքք են . Քամպրո , Փորթո , Էգորա :

Հ. Փորթուկալի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Փորթուկալի մէջ ուսմունք , գիտութիւնք և արհեստք այնչափ յառաջ գացած չեն :

Այս երկրին հողը բարեբեր է . բայց լաւ մշակուած չէ : Բերքերուն մէջ նշանաւոր են լիմոն և նարինջ :

Տ Ա Ն Ը Մ Ա Ր Գ Ա

Հ. Տանըմարգայի սահմաններն որո՞նք են .

Պ . Տանրմարդայի սահմաններն են . Հիւսիսէն՝
Շուէտ-Նորվեկիա , որմէ Սքակէր-Րագ նեղուցով
բաժնուած է . Արեւմուտքէն՝ Հիւսիսային ծով և
Շուէտ-Նորվեկիա, որմէ Քաթէկադի նեղուցով բաժ-
նուած է :

Հ . Տանրմարդայի բնակիչն ո՞րչափ է .

Պ . Տանրմարդայի բնակիչն է 2,000,000 :

Հ . Տանրմարդայի մայրաքաղաքն և գլխաւոր
քաղաքներն որո՞նք են .

Պ . Տանրմարդայի մայրաքաղաքն է ՔՕԲԷՆՀԱԿ՝
ունի 273 000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են . Վիպորկ , Ալպորկ :

Հ . Տանրմարդայի վրայ ի՞նչ գիտես .

Պ . Տանրմարդա դաշտային երկիր մ'է . օդը
ցուրտ և խոնաւ է : Բերքերուն մէջ նշանաւոր են
Րիսկա ըսուած ձուկն , և ծովային թռչնոց փետուր-
ներն :

ՇՈՒԷՏ-ՆՈՐՎԷԿԻԱ

Հ . Շուէտ-Նորվեկիոյ սահմաններն որո՞նք են .

Պ . Շուէտ-Նորվեկիոյ սահմաններն են . Հիւսի-
սէն՝ Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոս . Արեւմուտ-
քէն՝ Ատլանտեան Ովկիանոս . Հարաւէն՝ Սքակէր-
Րագ ու Քաթէկադ նեղուցներն , Տանրմարդա և
Պալթիկ ծով . Արեւելքէն՝ Պալթիկ ծով և Եւրոպա-
կան Ռուսիա :

Հ . Շուէտ-Նորվեկիա ի՞նչ երկիրներէ կը բաղ-
կանայ .

Պ. Շուէտ-Նորվէկիա կը բաղկանայ ՇՈՒԷՏ և ՆՈՐ-
ՎԷԿԻԱ երկիրներէն, որոնք միանալով կազմած են
ՇՈՒԷՏ-ՆՈՐՎԷԿԻՈՅ թագաւորութիւնը :

Հ. Շուէտ-Նորվէկիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ. Շուէտ-Նորվէկիոյ բնակիչն է 6,500,000 :

Հ. Շուէտ-Նորվէկիոյ Մայրաքաղաքն և գլխաւոր
քաղաքներն որո՞նք են .

Պ. Շուէտ-Նորվէկիոյ մայրաքաղաքն է ՍԹՈՔ-
ՀՈԼՄ՝ ունի 176,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են. Քրիստիանիա, Կո-
թէնպօրկ, Քարլսքրոնա, Պերկէն, Կէֆլ :

Հ. Շուէտ-Նորվէկիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Շուէտ-Նորվէկիոյ մէջ ուսմունք և գիտու-
թիւնք յառաջադէմ վիճակի մէջ են :

Այս երկրին Նորվէկիոյ մասը լեռնոտ և քարոտ
է. ծովեզերքն ևս սեպաձեւ ծայրերով և մեծ ու
փոքր անթիւ խութերով լի է : Իսկ Շուէտի մասը
դաշտային ըլլալով, ունի բազմաթիւ լիճեր, որոց
մէջէն շատ ձուկ կ'ելլէ :

Հ Ո Լ Ա Ն Տ Ա

Հ. Հոլանտայի սահմաններն որո՞նք են .

Պ. Հոլանտայի սահմաններն են. Հիւսիսէն և
Արեւմուտքէն՝ Հիւսիսային ծով. Հարաւէն՝ Պէլճի-
զա. Արեւելքէն՝ Գերմանիա :

Հ. Հոլանտայի բնակիչն ո՞րչափ է .

Պ. Հոլանտայի բնակիչն է 4,150,000 :

Հ. Հոլանտայի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Հոլանտայի մայրաքաղաքն է ԼԱ-ՀԵՅ՝ Հիւսիսային ծովուն վրայ շինուած , ունի 125,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են Ամսթերսամ , Ռոթերսամ , Լէյսէն , Ուքրէիս :

Հ. Հոլանտայի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Հոլանտա բոլորովին հարթ և դաշտային երկիր մ'է . շատ տեղեր ծովէն ալ ցած ըլլալով , ծովու ջուրն ստէպ ցամաքն կ'ողողէ . այս վտանգէն երկիրն ազատ պահելու համար մեծամեծ թումբեր կը շինեն ծովուն եզերքը . բայց այս թումբերն ալեաց բռնութեան չդիմանալով , ստէպ կը քայքայուին , և մեծամեծ վնասներ կը պատճառեն : Ծովու ջուրց ողողումէն կազմուած է Զիւտէր-Զէի ծոցն , որ ժամանակաւ լիճ մ'էր :

Պ Ե Լ Ճ Ի Գ Ա

Հ. Պելճիգայի սահմաններն որո՞նք են .

Պ. Պելճիգայի սահմաններն են . Հիւսիսէն՝ Հոլանտա և Հիւսիսային ծով . Արեւմուտքէն և Հարաւէն՝ Ֆռանսա . Արեւելքէն՝ Գերմանիա :

Հ. Պելճիգայի բնակիչն ո՞րչափ է .

Պ. Պելճիգայի բնակիչն է 5,600,000 :

Հ. Պելճիգայի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Պելճիգայի մայրաքաղաքն է ՊՐՈՒՍԵԼ՝ Էսքո

գետի ճիւղերէն միոյն վրայ շինուած է : Բնակչաց թիւն է 400,000 :

Գլխաւոր քաղաքներն են Անվերս , Կանս , Լիէժ , Նամիւր :

Հ. Պելճիգայի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Պելճիգայի մէջ արհեստք , գիտութիւնք և ճարտարութիւնք շատ յառաջ գացած են :

Երկիրն ընդհանրապէս դաշտային է , միայն Արեւելեան կողմը կը գտնուին մի քանի լեռներ :

Օգը բարեխառն է , բայց ձմեռը ցուրտ կ'ընէ :

Զ Ո Ւ Ի Ց Ե Ր Ի Ա

Հ. Զուիցերիոյ սահմաններն որո՞նք են .

Պ. Զուիցերիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Գերմանիա . Արեւմուտքէն՝ Ֆրանսա . Հարաւէն՝ Իտալիա . Արեւելքէն՝ Աւստրիա-Հունգարիա :

Հ. Զուիցերիոյ բնակիչն որչափ է .

Պ. Զուիցերիոյ բնակիչն է 2,850,000 :

Հ. Զուիցերիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Զուիցերիոյ մայրաքաղաքն է Պեռն՝ Աւր գետի վրայ շինուած . ունի 45,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են Պալ , Յուրիխ , Լուցէռն , Նէովշաթել , Ժընէվ , Ֆրիպուրկ :

Հ. Զուիցերիոյ վրայ նշանակութեան արժանի ի՞նչ կայ .

Պ. Զուիցերիոյ մէջ հասարակաց կրթութեան և

մանկավարժութեան շատ հոգ կը տարուի . բարձրագոյն համալսարաններն , մանկավարժական դըպրոցներն և այլ կրթական հաստատութիւնք խիստ նշանաւոր են :

Զուիցերիոյ մէջ է Ալպեան լեռանց մէկ մասը , որ իւր բարձր գագաթներով և գեղեցիկ ու զուարճալի մարգագետիններով հաճոյալի տեսք մը կ'ընծայէ աչաց : Այս լեռանց գագաթներն մշտակայ ձեամբ ծածկուած ըլլալով , ստէպ սառի և ձիւնի գունտեր կը բրթին և որոտագին ձայներով վար կը գլորին և այսպէս մարդոց , բնակարանաց և անասնոց մեծամեծ վնասներ կը հասցնեն :

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Հ . Յուճաստանի սահմաններն որո՞նք են .

Պ . Յուճաստանի սահմաններն են . Հիւսիսէն՝ Եւրոպական Թուրքիա . Արեւմուտքէն՝ Յունիական ծով . Հարաւէն՝ Միջերկրական ծով . Արեւելքէն՝ Արշիպեղազոս :

Հ . Յուճաստանի բնակիչն որչափ է .

Պ . Յուճաստանի բնակիչն է 2,000,000 :

Հ . Յուճաստանի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ . Յուճաստանի մայրաքաղաքն է ԱԹԵՆՔ՝ Աթէնա ծոցի եզերքէն քառորդ ժամ հեռի է , նաւահանգիստն է Պիրէոն , որ Աթէնա ծոցի վրայ շինուած և մայրաքաղաքին հետ երկաթուղով միացած է : Աթէնք և Պիրէոն ունին 117,750 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են Բաղրաս, Սպարթա,
Կորնթոս, Լարիսսա, Վոլո, Շիրա :

Հ. Յունաստանի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Յունաստան ժամանակաւ ուսմանց, գիտու-
թեանց և արհեստից մէջ առաջին ծաղկեալ երկիրն
էր : Այժմ թէև իւր նախկին վիճակն չունի, բայց
յառաջադէմ ազգաց կարգին մէջ է : Ծովային ա-
ռելտուրն նշանաւոր է . հողն բարեբեր է, բայց
այնքան լաւ մշակուած չէ :

ՌՈՒՄԱՆԻԱ

Հ. Ռումանիոյ սահմաններն որո՞նք են .

Պ. Ռումանիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝
Եւրոպական Ռուսիա և Աւստրիա-Հունգարիա .
Արեւմուտքէն՝ Աւստրիա-Հունգարիա և Սերպիա .
Հարաւէն՝ Թուրքիա . Արեւելքէն՝ Սեւ ծով և
Եւրոպական Ռուսիա :

Հ. Ռումանիոյ բնակիչն որչափ է .

Պ. Ռումանիոյ բնակիչն է 5,500,000 :

Հ. Ռումանիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քա-
ղաքներն որո՞նք են .

Պ. Ռումանիոյ մայրաքաղաքն է ՊՈՒՔՐԵՇ՝ Դա-
նուբ գետի եզերքէն ոչ շատ հեռի կառուցեալ,
երկաթուղւով միացած է Ճիւրնէվոյի հետ, որ Դա-
նուբ գետին վրայ . ունի 220,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են Եաշ, Իպրայիլ, Քէու-
սէննէ, Թուլչա, Կալաց :

Հ. Ռուսմանիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Ռուսմանիա ընդհանրապէս դաշտային և բարեբեր երկիր մ'է . ամէն տեսակ բերք կ'արտադրէ :
Վաճառականութիւնը ծաղկեալ վիճակի մէջ է .
բայց արհեստք շատ յառաջ դացած չեն :

Ս Ե Ր Պ Ի Ա

Հ. Սերպիոյ սահմաններն որո՞նք են .

Պ. Սերպիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Աւրստրիա-Հունգարիա . Արեւմուտքէն և Հարաւէն՝ Եւրոպական Թուրքիա . Արեւելքէն՝ Եւրոպական Թուրքիա և Ռուսմանիա :

Հ. Սերպիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ. Սերպիոյ բնակիչն է 1,865,000 :

Հ. Սերպիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Սերպիոյ մայրաքաղաքն է ՊԵԼԿՐԱՏ՝ Դանուբ գետին վրայ շինուած . ունի 30,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են Գլասովա , Նիշ , Սեմեւսրիա , Վրանիա , Քրակուլէվաց :

Հ. Սերպիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Սերպիա լեռնոտ և անտառային երկիր մ'է : Այս լեռներն կանանչ մարգագետիններով ծածկընուած ըլլալով խաչնարածութիւնը նշանաւոր է . այսու երկիրն կ'արտադրէ ընտիր պանիր , կաթ , բուրդ և այլն :

Գ Ա Ր Ա Տ Ա Ղ

Հ. Գարատաղի սահմաններն որո՞նք են .

Պ. Գարատաղի սահմաններն են . Հիւսիսէն՝ Եւրոպական Թուրքիա . Արեւմուտքէն՝ Աւստրիա-Հունգարիա և Ադրիական ծով . Հարաւէն և Արեւելքէն՝ Եւրոպական Թուրքիա :

Հ. Գարատաղի բնակիչն ո՞րչափ է .

Պ. Գարատաղի բնակիչն է 250,000 :

Հ. Գարատաղի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Գարատաղի մայրաքաղաքն է Ջեթիսէ :

Գլխաւոր քաղաքներն են Բոսկորիցա , Տուլչիկետո , Անթիվարի :

Հ. Գարատաղի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Գարատաղ անբեր , ժայռոտ և սեպածեւ լեռներով ծածկուած երկիր մ'է . ԳԱՐԱՏԱՂ անունն այս լեռներուն դիրքէն առնուած է :

Գարատաղցիք ճարպիկ և քաջ մարդիկներ են . իւրեանց այս յատկութեամբն նշանաւոր անուն մը վաստկած են :



Ա Ս Ի Ա .

Հ . Ասիոյ սահմաններն որո՞նք են .

Պ . Ասիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոս . Արեւմուտքէն՝ Եւրոպա , Կասպից ծով , Արշիպեղազոս , Միջերկրական ծով և Կարմիր ծով . Հարաւէն՝ Հնդկաց Ովկիանոս . Արեւելքէն՝ Խաղաղական Ովկիանոս :

Հ . Ասիոյ մէջ ի՞նչ երկիրներ կան .

Պ . Ասիոյ մէջ կան հետեւեալ երկիրներն , որոցմէ ոմանք Եւրոպական այլ և այլ Տէրութեանց իշխանութեան տակ են և ոմանք անկախ Տէրութիւններ են .

ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԹԻԱ , ԱՍԻԱԿԱՆ ՌՈՒՍԻԱ , ԱՆԴՐԿՈՎԿԱՍ , ՊԱՐՍԿԱՍՏԱՆ , ԱՐԱԲԻԱ , ԹԱԹԱՐԻՍՏԱՆ , ՊԵՂՈՒՃԻՍՏԱՆ , ԱՖՂԱՆԻՍՏԱՆ , ՀՆԴԿԱՍՏԱՆ , ՀՆԴԿԱ-ՉԻՆ , ՉԻՆԱՍՏԱՆ , ՃԱՓՕՆ :

Հ . Ասիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ . Ասիոյ բնակիչն է 750,000,000 :

Հ . Ասիոյ գլխաւոր ծովերն որո՞նք են .

Պ . Ասիոյ գլխաւոր ծովերն են .

Պէհրիկայի ծով, Օխոցի ծով, Ճափօնի ծով,
Գեղիկ ծով, Չինաց ծով՝ Խաղաղական Ովկիանոսէն
կազմուած են : Միջերկրական ծով, Արշիպեղագոս,
Մարմարա, Սեւ ծով՝ Ատլանտեան Ովկիանոսէն
կազմուած են : Կասպից ծով, որ ուրիշ ծովերու
հետ հաղորդակցութիւն չունի : Օմանի ծով, Կար-
միր ծով՝ Հնդկաց Ովկիանոսէն կազմուած են :

Հ. Ասիոյ գլխաւոր ծոցերն որո՞նք են, և ո՞ր
ծովերէն կազմուած են .

Պ. Ասիոյ գլխաւոր ծոցերն են .

Օպի ծոց, որ Հիւսիսային Սառուցեալ Ովկիա-
նոսէն կազմուած է : Պենկալայի ծոց՝ Հնդկաց Ով-
կիանոսէն կազմուած : Թօնֆինի ծոց, Սիամի ծոց՝
Չինաց ծովէն կազմուած :

Հ. Ասիոյ գլխաւոր լիճերն որո՞նք են, և ո՞ր
կը գտնուին .

Պ. Ասիոյ գլխաւոր լիճերն են .

Պայֆաւ, Պայֆալ՝ Ասիական Ռուսիոյ մէջ : Արալ՝
Թաթարիստանի մէջ :

Հ. Ասիոյ գլխաւոր նեղուցներն որո՞նք են .

Պ. Ասիոյ գլխաւոր նեղուցներն են .

Վոսփոր՝ Մարմարան Սեւ ծովու հետ կը միա-
ցընէ և Ասիան Եւրոպայէն կը բաժնէ : Տարսանել՝
Մարմարան Արշիպեղագոսի հետ կը միացնէ, և
նոյնպէս Ասիան Եւրոպայէն կը բաժնէ : Սուէզի
Ջրանցք՝ Կարմիր ծովն Միջերկրականի հետ կը միա-
ցընէ : Պապ-էլ-Մանսէպ՝ Կարմիր ծովն Օմանի ծո-
վուն հետ կը միացնէ : Մալաքա՝ Մալաքա թե-

րակղզւոյն և Սոււմաթրա կղզւոյն մէջ : Պէհրինկայի նեղուց , որ Հիւսիսային Սառուցեալ և Խաղաղական Ովկիանոսներն իրարու կը կցէ , և Ասիան Ամերիկայէն կը բաժնէ :

Հ . Ասիոյ գլխաւոր կղզիներն որո՞նք են .

Պ . Ասիոյ գլխաւոր կղզիներն են .

Լաֆէսիվեան , Մալսիվեան , Սէյլան , Անսաման , Նիֆոպար , որք Հնդկաց Ովկիանոսին մէջ են :

Հ . Ասիոյ գլխաւոր թերակղզիներն որո՞նք են .

Պ . Ասիոյ գլխաւոր թերակղզիներն են .

Փոքր Ասիա (Անատոլիա) , Արաբիա՝ Ասիոյ Արեւմտեան կողմը : Մալաքա՝ Հնդկա-Չինու Հարաւային կողմը : Քորէա՝ Չինաստանի Արեւելեան կողմը : Քամչաթա՝ Սիպերիոյ Արեւելեան կողմը :

Հ . Ասիոյ գլխաւոր հրուանդաններն որո՞նք են .

Պ . Ասիոյ գլխաւոր հրուանդաններն են .

Պապ-էլ-Մանսէպ , Ռազ-էլ-Հադ՝ Արաբիոյ Հարաւային եզեր վրայ : Քուօրին՝ Հնդկաստանի Հարաւային եզեր վրայ : Արեւելեան գլուխ՝ Սիպերիոյ Արեւելեան ծայրն :

Հ . Ասիոյ գլխաւոր լեռներն որո՞նք են .

Պ . Ասիոյ գլխաւոր լեռներն են .

Ուրալ լեռինք՝ Ասիոյ Արեւմտեան սահմանին վրայ : Կովկաս լեռինք՝ Կասպից և Սեւ ծովերուն մէջ : Ալթայ լեռինք՝ Սիպերիոյ և Չինաստանի սահմանաց վրայ : Հիմալայա լեռինք՝ Հնդկաստանի և Չինաստանի սահմանաց վրայ : Կաթ լեռինք՝ Հրնդկաստանի մէջ :

Հ. Ասիոյ գլխաւոր գետերն որո՞նք են .

Պ. Ասիոյ գլխաւոր գետերն են .

Օպի , որ Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսը կը թափի : Ուրալ՝ Կասպից ծովը կը թափի : Ինդոս Օմանի ծովը կը թափի : Գանգէս՝ Պենկալայի ծոցը կը թափի : Ամուր՝ Օխոցքի ծովը կը թափի : Ամուր - Տարիա , Սիր-Տարիա՝ Արալ լիճը կը թափին :

Ե Ր Կ Ի Ր Ք Ա Ս Ի Ա Յ

ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԲԻԱ

Ասիական Թուրքիա Օսմանեան Կայսրութեան մի մասն ըլլալով վերջէն պիտի խօսիմք :

ԱՍԻԱԿԱՆ ՌՈՒՍԻԱ

Հ. Ասիական Ռուսիա ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ .

Պ. Ասիական Ռուսիա կը բաղկանայ հետեւեալ երկիրներէն .

ՍԻՊԵՐԻԱ՝ Ասիոյ Հիւսիսային մասը գրաւած է .

ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ՝ Ասիոյ կեդրոնն է :

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ՝ Կովկաս լեռան Հարաւային կողմը գտնուած երկրէն կը բաղկանայ :

Հ. Ասիական Ռուսիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ. Ասիական Ռուսիոյ բնակիչն գրեթէ 15-16,000,000 է :

Հ. Սիպերիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Սիպերիա ընդարձակ երկիր մ'է . Հիւսիսային կողմը խիստ ցուրտ կ'ընէ . սառն գրեթէ անպակաս . հողն բարեբեր , բայց քիչ մշակուած է :

Հ. Սիպերիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Սիպերիոյ գլխաւոր քաղաքներն են Թօպօլսֆ , Իրֆուքսֆ , Թօմսֆ , Եաֆուքսֆ :

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ , ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Անդրկովկաս և Պարսկաստան թուրքիոյ սահմանակից հետեւաբար մեզ թուրքիացւոցս անմիջական կարեւորութիւն ունեցող երկիրներ ըլլալով փոքր ինչ ընդարձակօրէն պիտի խօսուի թուրքիայէ յետոյ :

Ա Ր Ա Բ Ի Ա

Հ. Արաբիոյ սահմաններն որո՞նք են .

Պ. Արաբիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Ասիական թուրքիա . Արեւմուտքէն՝ Կարմիր ծով և Պապէլ-Մանտէպի նեղուց . Հարաւէն՝ Օմանի ծով . Արեւելքէն՝ Հիւրմիւզի նեղուց և Պարսից ծոց :

Հ. Արաբիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Արաբիոյ գլխաւոր քաղաքներն են . Մէֆֆէ , Մէսինէ , Ճիսսէ , Մօֆա , Սանա :

Հ. Արաբիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Արաբիա դաշտային և աւազուտ երկիր մ'է .

հողն անբեր և անմշակ . քանի մը տեղեր միայն պտղարեր են . Հիւսիսային կողմը քիչ անգամ անձրեւ կուգայ , հետեւաբար սաստիկ տաք կ'ընէ :

Այս երկրին ծովեզերքն միայն ծանօթ իսկ ներսերն դեռ անծանօթ վիճակի մէջ են : Այս պատճառաւ բնակչաց թիւն որոշապէս յայտնի չէ . սակայն 9-10 միլիոն ըլլալ կը կարծուի :

ԹԱԹԱՐԻՍՏԱՆ

Հ . Թաթարիստանի սահմաններն որո՞նք են .

Պ . Թաթարիստանի սահմաններն են . Հիւսիսէն՝ Սիպերիա . Արեւմուտքէն՝ Կասպից ծով . Հարաւէն՝ Պարսկաստան և Աֆղանիստան . Արեւելքէն՝ Չինաստան :

Հ . Թաթարիստանի գլխաւոր քաղաքներն ո՞րք են :

Պ . Թաթարիստանի գլխաւոր քաղաքներն են Պուխարա , Սամարղանդ , Խոֆանս , Եիվա :

Հ . Թաթարիստանի վրայ ի՞նչ գիտես :

Պ . Թաթարիստանի ներսերը տակաւին անծանօթ վիճակի մէջ են :

Բնակիչք տգէտ և ընդհանրապէս վրանաբնակ են : Սոցա թիւն 8-9,000,000 ըլլալ կը կարծուի :

ՊԵՆՈՒՃԻՍՏԱՆ

Հ . Պենուճիստանի սահմաններն որո՞նք են .

Պ . Պենուճիստանի սահմաններն են . Հիւսիսէն՝ Աֆղանիստան . Արեւմուտքէն՝ Պարսկաստան . Հա-

րաւէն՝ Օմանի ծով. Արեւելքէն՝ Հնդկաստան :

Հ. Պելուճիստանի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Պելուճիստանի մայրաքաղաքն է Քէլսաթ :
Գլխաւոր քաղաքն է Կանսալա :

Հ. Պելուճիստանի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Պելուճիստան անապատներով ծածկուած երկիր մ'է : Բնակիչք ընդհանրապէս վրաններու տակ կ'ապրին և 1,000,000 ըսաւ կը կարծուին :

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

Հ. Աֆղանիստանի սահմաններն որո՞նք են .

Պ. Աֆղանիստանի սահմաններն են . Հիւսիսէն՝ Թաթարիստան . Արեւմուտքէն՝ Պարսկաստան . Հարաւէն՝ Պելուճիստան . Արեւելքէն՝ Հնդկաստան :

Հ. Աֆղանիստանի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Աֆղանիստանի մայրաքաղաքն է ՔԱՊՈՒԼ . ունի 60,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են Քանսահար, Հէրաթ :

Հ. Աֆղանիստանի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Աֆղանիստանի Հարաւային կողմը կան աւազուտ անապատներ . իսկ Հիւսիսային կողմը՝ լեռներ :

Հողը բարեբեր և լաւ մշակուած է :

Բնակչաց թիւն 5-6,000,000 է գրեթէ :

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հ. Հնդկաստանի սահմաններն որո՞նք են .

Պ. Հնդկաստանի սահմաններն են . Հիւսիսէն՝ Չինաստան . Արեւմուտքէն՝ Աֆղանիստան , Պելուսիստան և Յմանի ծով . Հարաւէն՝ Հնդկաց Ովկիանոս . Արեւելքէն՝ Պենկալայի ծոց և Հնդկա-Չին :

Հ. Հնդկաստանի բնակիչն որչափ է .

Պ. Հնդկաստանի բնակիչն է 253,000,000 :

Հ. Հնդկաստանի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Հնդկաստանի մայրաքաղաքն է ԿԱԼԿԱԹԱ՝ Գանգէս գետի վրայ շինուած ունի . 1,000,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են Հայսերապաս , Պոմպայ , Լահոր , Ալլահապաս , Քաւմիր , Կոա :

Հ. Հնդկաստանի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Հնդկաստան արհեստից և ձեռագործաց մէջ շատ յառաջ գացած է . նշանաւոր են Քաշմիրի և Լահորի շալերն : Վաճառականութիւնն եւս բանուկ վիճակի մէջ է . բայց բնիկ Հնդկաստանցիք իրենց երկրէն դուրս ելլելու սովորութիւն չունենալով , վաճառականութիւնը մեծ մասամբ Եւրոպացւոց և Հայոց ձեռքը կը գտնուի :

ՀՆԴԿԱ-ՉԻՆ

Հ. Հնդկա-Չինու սահմաններն որո՞նք են .

Պ. Հնդկա-Չինու սահմաններն են . Հիւսիսէն՝ Չինաստան . Արեւմուտքէն՝ Հնդկաստան և Պենկա-

լայի ծոց . Հարաւէն՝ Մալաքքայի նեղուց և Սիամի Արեւելքէն՝ ծոց . Չինաց ծով :

Հ . Հնդկա-Չին ո՞րչափ բնակիչ ունի .

Պ . Հնդկա-Չին ունի 37-38,000,000 բնակիչ :

Հ . Հնդկա-Չինու գլխաւոր քաղաքներն ո՞յք են .

Պ . Հնդկա-Չինու գլխաւոր քաղաքներն են Մանսալէ , Մալաքքա , Հուէ , Սայկոն , Պանֆոֆ :

ՉԻՆԱՍՏԱՆ

Հ . Չինաստանի սահմաններն որո՞նք են .

Պ . Չինաստանի սահմաններն են . Հիւսիսէն՝ Սիպերիա . Արեւմուտքէն՝ Սիպերիա , Թաթարիստան և Հնդկաստան . Հարաւէն՝ Հնդկաստան , Հնդկա-Չին և Չինաց ծով . Արեւելքէն՝ Սաղաղական Ովկիանոս , Ճափօնի ծով , և Դեղին ծով :

Հ . Չինաստանի բնակիչն ո՞րչափ է .

Պ . Չինաստանի բնակիչն գրեթէ 450,000,000 է :

Հ . Չինաստանի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ . Չինաստանի մայրաքաղաքն է ՓեՔին . ունի 1,000,000 բնակիչ : Գլխաւոր քաղաքներն են Քանթոն , Մաֆաօ , Թիէնչէն , Նանֆին :

Հ . Չինաստանի վրայ ի՞նչ գիտես .

Պ . Բուն Չինաստանցիք արհեստից կողմանէ շատ յաջողակ են : Թուղթը , մելանը , յախճապակին , վեռնիչը և մետաքսեղէնները շատ նշանաւոր են :

Չինաստանի ներքին քաղաքաց բնակիչք օտա-

րաց հետ յարաբերութիւն և վաճառականութիւն չեն ըներ . միայն ծովեզերեայ բնակիչք սակաւ ինչ յարաբերութիւն ունին օտարաց հետ :

Այս երկրին հիւսիսային սահմանաց վրայ կան բարձր և անճառիկ լեռներ , որոնք իրենց դիրքով բնական պարիսպ մը ձեւացուցած են :

Ճ Ա Փ Օ Ն

Հ . Ճափօնի սահմաններն որո՞նք են .

Պ . Ճափօնի սահմաններն են . Հիւսիսէն՝ Օխոցքի ծով . Արեւմուտքէն՝ Ճափօնի ծով . Հարաւէն և Արեւելքէն՝ Սաղաղական Ովկիանոս :

Հ . Ճափօնի բնակիչն որչափ է .

Պ . Ճափօնի բնակիչն գրեթէ 33,000,000 է :

Հ . Ճափօնի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ . Ճափօնի մայրաքաղաքն է ԵԷՏՅ 1,000,000 բնակչօք :

Գլխաւոր քաղաքներն են . Միաֆօ , Էօֆօհամա :

Հ . Ճափօնի վրայ ի՞նչ գիտես .

Պ . Ճափօն հրաբղխային երկիր մ'է . այս պատճառաւ շատ երկրաշարժ կ'ըլլայ :

Այս երկրին մէջ երբեմն Քրիստոնէութիւնը ծաղկեցաւ , բայց յետոյ Տէրութեան հրամանաւ քրիստոնեայք բնաջինջ եղան : Այժմ Եւրոպական լեզուաց ուսուցման համար դպրոցներ բացուած են :

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Գ

Ա Փ Ր Ի Կ Է

Հ. Ափրիկէի սահմաններն որո՞նք են .

Պ. Ափրիկէի սահմաններն են . Հիւսիսէն՝ Միջերկրական ծով . Արեւմուտքէն և Հարաւէն՝ Ատլանտեան Ովկիանոս . Արեւելքէն՝ Հնդկաց Ովկիանոս և Կարմիր ծով :

Հ. Ափրիկէի գլխաւոր երկիրներն որո՞նք են .

Պ. Ափրիկէի գլխաւոր երկիրներն են .

ԵԳԻՊՏՈՍ , ՆՈՒՊԻԱ , ՀԱՊԵՇԻՍՏԱՆ , ՊԵՐՊԵՐԻՍԱՆ , ՍԱՀԱՐԱ , ՍՈՒՏԱՆ , ՍԵՆԵԿԱՄՊԻԱ , ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՒԻՆԷԱ , ՀԱՐԱԻԱՅԻՆ ԿՈՒԻՆԷԱ , ՍՕՄԱԼԻՍ , ԶԱՆԿԷՊԱՐ , ՄՕԶԱՄՊԻՔ , ԲԱՐԵՅՈՒՍՈՅ ԵՐԿԻՐ :

Այս երկիրներէն ոմանք Եւրոպական այլ և այլ Տէրութեանց իշխանութեան տակ են և ոմանք անկախ Տէրութիւններ են :

Հ. Ափրիկէի բնակիչն որչափ է .

Պ. Ափրիկէի բնակիչն է 170 000,000 :

Հ. Ափրիկէի եզերքն ի՞նչ ծովեր կը թրջեն .

Պ. Ափրիկէի եզերքն կը թրջեն .

Միջերկրական ծով , որ Հիւսիսային կողմն է :
Ասլանսեան Ովկիանոս՝ Արեւմտեան և Հարաւային
կողմը : Հնդկաց Ովկիանոս և Կարմիր ծով՝ Արեւե-
լեան կողմը :

Հ. Ափրիկէի գլխաւոր ծոցերն որո՞նք են .

Պ. Ափրիկէի գլխաւոր ծոցերն են .

Սիրթի ծոց , Քապէսի ծոց , որոնք Միջերկրական
ծովէն կազմուած են : Կուիկէայի ծոց՝ Ատլանտեան
Ովկիանոսէն կազմուած է :

Հ. Ափրիկէի գլխաւոր կղզիներն որո՞նք են .

Պ. Ափրիկէի գլխաւոր կղզիներն են .

Ասորեան , Գանարեան , Իալարի գլխոյ կղզիք՝
Ատլանտեան Ովկիանոսի մէջ են : Մասակաւար ,
Գոսօրեան , Սէճէլեան , Մաւարեան կղզիք՝ Հնդ-
կաց Ովկիանոսի մէջ են :

Հ. Ափրիկէի նեղուցներն որո՞նք են .

Պ. Ափրիկէի նեղուցներն են .

Ճիպրալթարի նեղուց՝ Ափրիկէն Եւրոպայէն
կը բաժնէ : Մօզամպիկի նեղուց՝ Մատակասքար
կղզւոյն և Ափրիկէի մէջ : Պապ-էլ-Մանսէպի նե-
ղուց , Սուէզի ջրանցք՝ Ափրիկէն Ասիայէն կը
բաժնեն :

Հ. Ափրիկէի գլխաւոր հրուանդաններն ո՞րք են .

Պ. Ափրիկէի գլխաւոր հրուանդաններն են .

Պօն գլուխ՝ Պէրպէրիստանի Հիւսիսային կող-
մը : Սպիտակ գլուխ՝ Սահարայի Արեւմտեան ե-

զեր վրայ : Դալարի գլուխ՝ Սենեկամալիոյ եզեր վը-
րայ : Լօբէզ , Ֆրիօ՝ Կուլինէայի եզեր վրայ : Բարե-
յուսոյ գլուխ՝ Բարեյուսոյ երկրին Հարաւային եզեր
վրայ :

Հ . Ափրիկէի գլխաւոր լեռներն որո՞նք են .

Պ . Ափրիկէի գլխաւոր լեռներն են .

Ադլաս՝ Պէրպէրիստանի մէջ : Քօնկ՝ Կուլինէ-
այի մէջ : Լուսնոյ լերինք՝ Հապէշիստանի մէջ :

Հ . Ափրիկէի գլխաւոր գետերն որո՞նք են , և ո՞ւր
կը թափին .

Պ . Ափրիկէի գլխաւոր գետերն են .

Նեղոս՝ Միջերկրական ծովը կը թափի : Սե-
նեկալ , Կամպիա՝ Ատլանտեան Ովկիանոսը կը թա-
փին : Նիկէր , Քօնկօ՝ Կուլինէայի ծոցը կը թափին :
Չամպէզ՝ Հնդկաց Ովկիանոսը կը թափի :

Հ . Ափրիկէի գլխաւոր լիճերն որո՞նք են .

Պ . Ափրիկէի գլխաւոր լիճերն են .

Տամպէա՝ Հապէշիստանի մէջ : Չաս՝ Սուտանի
մէջ : Նիանգա՝ Ափրիկէի ներսերը :



ԵՐԿԻՐՔ ԵՓՐԻԿԷՐ

ԵԳԻՊՏՈՍ, ՆՈՒՊԻԱ

Այս երկիրներուն վրայ Թուրքիոյ մէջ պիտի
խօսուի :

Հ Ա Պ Է Շ Ի Ս Տ Ա Ն

Հ. Հապէշիստանի սահմաններն որո՞նք են .

Պ. Հապէշիստանի սահմաններն են . Հիւսիսէն
և Արեւմուտքէն՝ Նուպիա . Արեւելքէն Կարմիր ծով :

Հ. Հապէշիստանի վրայ նշանակութեան արժա-
նի ի՞նչ կայ .

Պ. Հապէշիստան Ափրիկէի մէջ այն միակ երկի-
րըն է, որ բարձր լեռներով ծածկուած գեղեցիկ
տեսք մ'ունի : Այս լեռներուն մէջ կան ընդարձակ
լեռնադաշտեր, սրածայր գագաթներ, խիտ ան-
տառներ, գեղեցիկ կիրճեր, արագընթաց գետեր
և անհամար ջրվէժներ, որք իրենց տեսարաններով
Եւրոպիոյ Զուիցերիան կը յիշեցնեն : Այս հանգա-
մանքներով Հապէշիստան ԱՓՐԻԿԵԱՆ ԶՈՒԻՅԵՐԻԱ
կ'անուանուի : Սակայն Արեւելեան կողմն անա-
պատներ ալ կը գտնուին :

Հապէշիստանի բնակիչք Քրիստոնեայ են . բայց
ուրիշ Քրիստոնէից հետ հաղորդակցութիւն չունե-
նալով, Քրիստոնէից սովորութիւններն չունին և
բարբարոս վիճակի մէջ են :

Բնակչաց թիւն գրեթէ 3-3,500,000 է :

Մայրաքաղաքն է ԿՕՆՏԱՆ :

Պ Է Ր Պ Է Ր Ի Ս Տ Ա Ն

Հ . Պէրպէրիստան Ափրիկէի ո՞ր կողմը կ'իյնայ ,
և սահմաններն որո՞նք են .

Պ . Պէրպէրիստան Ափրիկէի Հիւսիսային կողմը՝
Միջերկրական ծովուն վրայ կ'իյնայ : Սահմաններն
են . Հիւսիսէն՝ Միջերկրական ծով և Ճիպրալթարի
նեղուց . Արեւմուտքէն՝ Ատլանտեան Ովկիանոս .
Հարաւէն՝ Սահարա . Արեւելքէն՝ Եգիպտոս :

Հ . Պէրպէրիստան ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ .

Պ . Պէրպէրիստան կը բաղկանայ հետեւեալ եր-
կիրներէն .

ԹԱՐԱՊԼՈՒՍ , ԹՈՒՆՈՒԶ , ԱԼՃԵՐԻ , ՄԱՐՕՔ :

Թարապլուս , Թունուզ , Թուրքիոյ մասերն են :

Հ . Պէրպէրիստանի գլխաւոր քաղաքներն ո-
րո՞նք են .

Պ . Պէրպէրիստանի գլխաւոր քաղաքներն են .
Ալնեի , Քօնստանթին , Ֆէս , Մարօֆ :

Ս Ա Շ Ա Ր Ա

Հ . Սահարայի սահմաններն որո՞նք են .

Պ . Սահարայի սահմաններն են . Հիւսիսէն՝ Պէր-
պէրիստան . Արեւմուտքէն՝ Ատլանտեան Ովկիա-
նոս . Հարաւէն՝ Սենեկամպիա և Սուտան . Արե-
ւելքէն՝ Նուպիա և Եգիպտոս :

Հ . Սահարա ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ .

Պ . Սահարա կը բաղկանայ ընդարձակ աւազուտ
անապատներէ , որոց մէջ օրերով ճամբորդելով ո՛չ
ջուր կարելի է գտնել և ո՛չ բոյս : Այս անապատ-
ներուն մէջ երբեմն սաստիկ փոթորիկներ պատա-
հելով , աւազն մինչեւ երկինք կը հանեն և ամ-
բողջ կարաւաններ աւազի մէջ կը կորսնցնեն : Սա-
կայն կը գտնուին վայրեր ալ , որք ջրարբի և բերրի
են և կը կոչուին Օվասիս :

Բնակչաց թիւն հաւանականաբար 4,000,000 է :

Ս Ո Ւ Տ Ա Ն

Հ . Սուտանի սահմաններն որո՞նք են .

Պ . Սուտանի սահմաններն են . Հիւսիսէն՝ Սա-
հարա . Արեւմուտքէն՝ Սենեկամպիա . Հարաւէն՝
Հիւսիսային Կուլինէա . Արեւելքէն՝ Նուպիա :

Հ . Սուտանի վրայ ի՞նչ գիտես .

Պ . Սուտանի մէջ տարւոյն ութ ամիսը սաստիկ
տաք կ'ընէ . երբ Յունիա ամիսն գայ , անձրեւներն
կ'սկսին . այս ժամանակ երկիրն կը պարարտանայ և
բոյսերով կը ծածկուի : Ունի ամէն տեսակ ընտանի
կենդանիներ և 40,000,000 ի մօտ բնակիչ :

Ս Ե Ն Ե Կ Ա Մ Պ Ի Ա

Հ . Սենեկամպիա Ափրիկէի ո՞ր կողմը կ'իյնայ .

Պ . Սենեկամպիա Ափրիկէի Արեւմտեան կողմն՝
Ատլանտեան Ովկիանոսի վրայ կ'իյնայ :

Հ . Սենեկամպիոյ գլխաւոր քաղաքներն ո՞նք են .

Պ . Սենեկամպիոյ գլխաւոր քաղաքներն են .

ՍԷՆ-ԼՈՒԻ , ԿՕՐԷ , ՊԱՅՐՐԱՅ , ՔԱՇԷՕ :

Հ . Սենեկամալիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ . Սենեկամալիոյ մէջէն կ'անցնին Սենեկալ և Կամալիա գետերն , որոցմէ երկիրն կոչուած է ՍԵՆԵԿԱՄՊԻԱ : Թէ՛ այս և թէ՛ երկրին միւս գետերուն աւազն ոսկեխառն է :

Բնակչաց թիւն է գրեթէ 12 — 13 000,000 , որոց գլխաւոր զբաղումն է գետերուն աւազն զտել և ոսկին հանելով իրենց ապրուստն ճարել :

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՒԻՆԷԱ

Հ . Հիւսիսային Կուինէա ո՞ր երկիրներէն կը բաղկանայ .

Պ . Հիւսիսային Կուինէա կը բաղկանայ Քօնկ լեռանց և Ատլանտեան Ովկիանոսի մէջ գտնուած երկիրներէն . Սենեկամալիոյ սահմաններէն կ'սկսի և մինչեւ Լօբէզ հրուանդանը կը տարածուի :

Հ . Հիւսիսային Կուինէա որո՞ւ կը վերաբերի .

Պ . Հիւսիսային Կուինէա կը վերաբերի մասամբ՝ Անգղիոյ , Հոլանտայի , Ֆռանսայի և Փորթուկալի , և մասամբ՝ տեղական անկախ թագաւորաց :

Հ . Հիւսիսային Կուինէայի վրայ ի՞նչ գիտես .

Պ . Հիւսիսային Կուինէայի մէջ ամենասաստիկ տաք մը կը տիրէ . թէեւ Յունիսէն մինչեւ Հոկտեմբեր տեղացած անձրեւներն երկիրը կը զովացնեն . սակայն աւելի օդը կ'ապականեն քան կը մաքրեն , և յաճախ փոթորիկներով կը տեղան :

Բնակիչք 12,000,000 կը համարուին . կռապաշտ

և բարբարոս վիճակի մէջ են . գերիները կը չարչարեն և կռոց զոհ կ'ընեն :

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒԻՆԷԱ

Հ . Հարաւային Կուինէա ո՞ւր է .

Պ . Հարաւային Կուինէա , որ ՔՕՆԿՕ եւս կը կոչուի , Ատլանտեան Ովկիանոսի եզեր վրայ է . Լօբէզ հրուանդանէն կ'սկսի , և մինչեւ Ֆրիօ հըրուանդանը կը տարածուի :

Հ . Հարաւային Կուինէա որո՞ւր կը վերաբերի .

Պ . Հարաւային Կուինէայի մէկ մասը կը վերաբերի ԼՕԱՆԿՕ և ՔՕՆԿՕ տեղահան անկախ թագաւորութեանց : Փորթուկալի ստացուածք են ԱՆԿՕԼԱ և ՊԷՆԿՈՒԷԼԱ երկիրներն : Իսկ Ֆռանսա Քօնկօ գետի եզերաց վրայ երկար ատեն խուզարկութիւններ ընելէ յետոյ անդ հաստատեց ՖՌԱՆՍԱԿԱՆ ՔՕՆԿՕՅԻ գաղթականութիւնը :

Հ . Հարաւային Կուինէայի վրայ ի՞նչ գիտես .

Պ . Հարաւային Կուինէա շատ տաք երկիր մ'ըլլալով վայրենի գազաններ շատ կը գտնուին . նըշանաւոր են Պօա կոչուած մեծ օձն , Ինսօնի խոչոր միջիւնն և Պապկայ խօսուեն թռչունը :

Բնակչաց թիւն է գրեթէ 10,000.000 :

Գլխաւոր քաղաքներն են Սան-Սալվատօր , Սէն-Բօլ Լօանկօ :

Ս Օ Մ Ա Լ Ի Ս

Հ . Սօմալիս Ափրիկէի ո՞ր կողմն է .

Պ . Սօմալիս Ափրիկէի Արեւելեան ծայրն է .

Պապ-էլ-Մանսէպի նեղուցէն կ'սկսի և մինչեւ
Զանկէպարի սահմանները կը տարածուի :

Հ. Սօմալիսի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Սօմալիսի ներսերը դեռ անծանօթ են .
միայն ծովու մօտ տեղերը ճանչցուած են :

Բնակիչք , որք 7,000 000 կը կարծուին , սեւա-
մորթ և խարտիչահեր են . բայց իրենց գեղեցկու-
թեամբ և խելացութեամբ նշանաւոր են :

Զ Ա Ն Կ Է Պ Ա Ր

Հ. Զանկէպար Ափրիկէի ո՞ր կողմն է .

Պ. Զանկէպար Ափրիկէի Արեւելեան եզերաց
վրայ է . Սօմալիսի սահմաններէն կ'սկսի և մինչեւ
Մօզամպիք կը տարածուի :

Հ. Զանկէպարի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Զանկէպարի մէջ կան շատ փիղեր , որոց փը-
ղոսկրն խիստ նշանաւոր է : Երկրին օդն տաք և
վատառողջ է : Բնակչաց թիւն է գրեթէ 3,000,000 :

Գլխաւոր քաղաքն է Զանգիպար :

Անգղիա և Գերմանիա այս երկրին մէջ հետզհե-
տէ գաղթականութիւններ հաստատելու վրայ են :

Մ Օ Զ Ա Մ Պ Ի Ք

Հ. Մօզամպիք Ափրիկէի ո՞ր կողմը կ'իյնայ .

Պ. Մօզամպիք Ափրիկէի Արեւելեան եզեր վրայ
կ'իյնայ . Զանկէպարի սահմաններէն կ'սկսի և մին-
չեւ Բարեյուսոյ երկիրն կը տարածուի :

Հ. Մօզամպիբի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Մօզամպիբ ընդհանրապէս բարեբեր երկիր մ'է . ամէն տեսակ բերք կ'արտադրէ . փղոսկրն շատ նշանաւոր է . գետերու աւազն ոսկեխառն է : Բնակչաց թիւն հաւանականաբար 2,000,000 է : Գլխաւոր քաղաքն է Մօզամպիբ :

ԲԱՐԵՅՈՒՍՈՅ ԵՐԿԻՐ

Հ. Բարեյուսոյ երկիրն Ափրիկէի ո՞ր կողմն է .

Պ. Բարեյուսոյ երկիրն Ափրիկէի Հարաւային ծայրը կ'իյնայ . բաց ի Հիւսիսային սահմանէն , ամէն կողմանէ Ովկիանոսներէ շրջապատուած է :


Հ. Բարեյուսոյ երկիրն որո՞ւ կը վերաբերի , և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Բարեյուսոյ երկիրն կը վերաբերի Անգղիոյ : Գլխաւոր քաղաքներն են Գաբ , Կոսանդիլա :

Հ. Բարեյուսոյ երկիրն վրայ ի՞նչ գիտես .

Պ. Բարեյուսոյ երկիրն լեռնոտ , բայց բարեբեր է . ունի բարեխառն կլիմայ մը . բայց ձմեռը սոսկալի փոթորիկներ տեղի ունենալով ծովու ու ցամաքի վրայ մեծամեծ մլասներ կը պատճառեն :

Բնակչաց թիւն 1,350,000 է գրեթէ :



Մ Ա Ս Ն Չ Ո Ր Ր Ո Ր Պ

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Հ . Ամերիկա ո՞ւր է .

Պ . Ամերիկա Եւրոպիոյ և Ափրիկէի Արեւմտեան կողմն է , և Հիւսիսէն դէպ ի Հարաւ տարածուած :

Հ . Ամերիկայի սահմաններն որո՞նք են .

Պ . Ամերիկայի սահմաններն են . Հիւսիսէն՝ Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոս . Արեւմուտքէն՝ Խաղաղական Ովկիանոս . Հարաւէն՝ Հարաւային Ովկիանոս . Արեւելքէն՝ Ատլանտեան Ովկիանոս :

Հ . Ամերիկա քանի՞ մասի կը բաժնուի .

Պ . Ամերիկա կը բաժնուի երկու մասի , որք են .

Հ Ի Ի Ս Ի Ս Ա Յ Ի Ն Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Հ Ա Ր Ա Ի Ա Յ Ի Ն Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Հ . Հիւսիսային և Հարաւային Ամերիկաները իրարու հետ կցուած են թէ բաժնուած .

Պ . Հիւսիսային և Հարաւային Ամերիկաները իրարու հետ Բանամայի պարանոցով կցուած են :

Հ . Ամերիկայի մէջ ի՞նչ երկիրներ կան .

Պ . Ամերիկայի մէջ կան հետեւեալ երկիրներն .
Հիւսիսային Ամերիկայի մէջ են .

ԿՐՕԷՆԼԱՆՏԱ , ԱԼԱՍՔԱ , ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ ,
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԻՔ , ՄԷՔՍԻԿԱ , ԿՈՒԱԹԷՄԱԼԱ :

Հարաւային Ամերիկայի մէջ են .

ՔՕԼՕՄՊԻԱ , ԿՈՒՅԱՆԱ , ՊՐԱԶԻԼԻԱ , ԲԷՐՈՒ ,
ՊՕԼԻՎԻԱ , ԲԱՐԱԿՈՒԱ , ԼԱ-ԲԼԱԴԱ , ՈՒՐՈՒԿՈՒԱ ,
ՉԻԼԻ , ԲԱԹԱԿՕՆԻԱ :

Այս երկիրներէն ոմանք անկախ Տէրութիւններ
են և ոմանք Եւրոպիոյ այլ և այլ Տէրութեանց
իշխանութեան տակ են :

Հ . Ամերիկայի բնակիչն ո՞րչափ է .

Պ . Ամերիկայի բնակիչն է 100,000,000 :

Հ . Ամերիկայի գլխաւոր ծովերն որո՞նք են .

Պ . Ամերիկայի գլխաւոր ծովերն են .

Պէհրինկայի ծով՝ Խաղաղական Ովկիանոսէն կազ-
մուած : Պաֆինի ծով՝ Հիւսիսային Սառուցեալ Ով-
կիանոսէն կազմուած : Անթիլեան ծով՝ Ատլանտեան
Ովկիանոսէն կազմուած :

Հ . Ամերիկայի գլխաւոր ծոցերն որո՞նք են .

Պ . Ամերիկայի գլխաւոր ծոցերն են .

Հոլսարնի ծոց , որ Սառուցեալ Ովկիանոսէն կազ-
մուած է : Սէն-Լուանի ծոց , Մէքսիկայի ծոց՝ Ատ-
լանտեան Ովկիանոսէն կազմուած : Քալիֆորնիոյ
ծոց՝ Խաղաղական Ովկիանոսէն կազմուած :

Հ . Ամերիկայի գլխաւոր նեղուցներն որո՞նք են .

Պ . Ամերիկայի գլխաւոր նեղուցներն են .

Պէհրինկայի նեղուց , որ Հիւսիսային Ամերիկան
Ասիայէն կը բաժնէ : Տէվիսի նեղուց՝ Ատլանտեան
Ովկիանոսի և Պաֆինի ծովուն մէջ : Հոլսարնի նե-

ղուց՝ Ատլանտեանի և Հուտարնի ծոցին մէջ : Մակե-
լանի նեղուց՝ Բաթակօնիոյ և Հրոյ Երկրին մէջ :

Հ. Ամերիկայի գլխաւոր կղզիներն որո՞նք են .

Պ. Ամերիկայի գլխաւոր կղզիներն են .

Նոր Երկիր , Մեծ Անթիլեանք , Փոքր Անթիլեանք ,
Քուպա՝ Ատլանտեան Ովկիանոսին մէջ : Հրոյ Երկիր՝
Հարաւային կողմը : Կալաբակոս կղզիք՝ Խաղաղա-
կան Ովկիանոսին մէջ :

Հ. Ամերիկայի գլխաւոր թերակղզիներն ո-
րո՞նք են .

Պ. Ամերիկայի գլխաւոր թերակղզիներն են .

Լապրասո , Նոր Սկովսիա , Ֆլորիսա , Քալիֆոր-
նիա՝ Հիւսիսային Ամերիկայի եզերաց վրայ են :

Հ. Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն ո-
րո՞նք են .

Պ. Ամերիկայի գլխաւոր հրուանդաններն են .

Ֆերուէլ՝ Կրօէնլանտիոյ Հարաւային կողմն :
Սան-Ռոք Հարաւային Ամերիկայի Արեւելեան եզեր
վրայ : Հորն՝ Երկիր Հրոյ կղզւոյն Հարաւային ծայ-
րըն : Սան-Լուիսա՝ Քալիֆորնիա թերակղզւոյն
Հարաւածայրն : Արեւմտեան գլուխ՝ Հիւսիսային
Ամերիկայի Արեւմտեան ծայրն :

Հ. Ամերիկայի գլխաւոր լեռներն որո՞նք են .

Պ. Ամերիկայի գլխաւոր լեռներն են .

Ապառաժուս լեռինք , Ալէկանի լեռինք՝ Հիւսի-
սային Ամերիկայի մէջ : Անիէզ լեռինք՝ Հարաւա-
յին Ամերիկայի մէջ :

Հ. Ամերիկայի գլխաւոր լիճերն որո՞նք են .

Պ . Ամերիկայի գլխաւոր լիճերն են .

Գերեաց լիճ , Ուիննիբէկ լիճ , Վերին լիճ , Մի-
ջիկան , Հուրոն՝ Հիւսիսային Ամերիկայի մէջ : Թի-
թիւաֆա , Մարաֆայիպօ՝ Հարաւային Ամերիկայի մէջ :

Հ . Ամերիկայի գլխաւոր գետերն որո՞նք են , և
ո՞ւր կը թափին .

Պ . Հիւսիսային Ամերիկայի գլխաւոր գետերն են .

Միսիսիբի՝ Մէքսիկայի ծոցը կը թափի : Օրէկոն՝
Խաղաղական Ովկիանոսը կը թափի :

Հարաւային Ամերիկայի մէջ են Օրէնոօֆ , Ամա-
գոն , Փարանա՝ Ատլանտեան Ովկիանոսը կը թափին :

Հ . Ամերիկայի գլխաւոր հրաբուլխներն ո՞յք են .

Պ . Ամերիկայի գլխաւոր հրաբուլխներն են .

Սուրբ Եղիա , Բոբոֆադէբէդլ՝ Հիւսիսային Ամե-
րիկայի մէջ : Քօթօբաֆսի , Արեգիբա՝ Հարաւային
Ամերիկայի մէջ :



Ե Ր Կ Ի Ր Ք Հ Ի Ի Ս Ի Ս Ա Յ Ի Ն Ա Մ Ե Ր Ի Կ Ա Յ Ի

Կ Ր Օ Է Ն Լ Ա Ն Տ Ա

Հ . Կրօէնլանտա Ամերիկայի ո՞ր կողմը կ'իյնայ .

Պ . Կրօէնլանտա Ամերիկայի Հիւսիսային կողմը
կ'իյնայ , Տէվիսի նեղուցով կը բաժնուի , և դէպ ի
Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոս կը տարածուի :

Հ . Կրօէնլանտայի վրայ ի՞նչ գիտելիք կայ .

Պ. Կրօնականտա ցուրտ և սառնապատ երկիր մ'է : Տարւոյն մէջ երեք ամիս շարունակ գիշեր և երեք ամիս շարունակ ցերեկ կ'ըլլայ : Բնակիչք կարճահասակ են և որսորդութեամբ կ'ապրին . Չմեռը գետնափոր տեղեր՝ իսկ ամառը ծովու շան կաշիէ շինուած վրաններու տակ կը բնակին :

Ա Լ Ա Ս Ք Ա .

Հ. Ալասքա Ամերիկայի ո՞ր կողմն է .

Պ. Ալասքա Ամերիկայի Արեւմտեան ծայրն է :

Հ. Ալասքայի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Ալասքայի ներսերը դեռ անծանօթ վիճակի մէջ են , միայն ծովեզերեայ տեղուանքն ծանօթ են : Բնակչաց մէկ ցեղին շրթունքը ճեղքուած է :

ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ

Հ. Նոր Բրիտանիա Ամերիկայի ո՞ր կողմն է .

Պ. Նոր Բրիտանիա Ամերիկայի Հիւսիսային կողմն է :

Հ. Նոր Բրիտանիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Նոր Բրիտանիոյ Հիւսիսային մասը անմշակ վիճակի մէջ է , և ծովեզերքը սեպաձեւ լեռներով լի : Բնակչաց թիւն է 4,500,000 :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ

Հ. Միացեալ Նահանգաց սահմաններն ո՞յք են .

Պ . Միացեալ Նահանգաց սահմաններն են . Հիւսիսէն՝ Նոր Բրիտանիա . Արեւմուտքէն՝ Սաղաղական Ովկիանոս . Հարաւէն՝ Մէքսիկա և Մէքսիկայի ծոց . Արեւելքէն՝ Ատլանտեան Ովկիանոս :

Հ . Միացեալ Նահանգաց մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ . Միացեալ Նահանգաց մայրաքաղաքն է ՌԻՈՒՇԻՆԿԹԸՆ՝ ֆոթօմաք գետին վրայ շինուած . ունի 150,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են Նիւ-Եօրք , Ֆիլասէլֆիա , Պոսթրն , Նիւ-Օրլէան , Սան-Ֆրանչիսկո :

Հ . Միացեալ Նահանգաց վրայ ի՞նչ գիտես .

Պ . Միացեալ Նահանգք աշխարհիս լուսաւորեալ , հարուստ և բազմամարդ երկիրներէն մին է : Երկրագործութիւն , արհեստք և վաճառականութիւն առաջին տեղն կը բռնեն : Դաստիարակութիւնն ամենուրեք տարածուած է : Ունի երկաթուղեաց անհամար գծեր և 50,000,000 է աւելի բնակիչ :

Մ Է Ք Ս Ի Կ Ա

Հ . Մէքսիկայի սահմաններն որո՞նք են .

Պ . Մէքսիկայի սահմաններն են . Հիւսիսէն՝ Միացեալ Նահանգք . Արեւմուտքէն՝ Սաղաղական Ովկիանոս . Հարաւէն՝ Սաղաղական Ովկիանոս և Կուաթէմալա . Արեւելքէն՝ Մէքսիկայի ծոց :

Հ . Մէքսիկայի մայրաքաղաքն ո՞րն է .

Պ . Մէքսիկայի մայրաքաղաքն է ՄԷՔՍԻԿԱ՝ բար-

ճըր դաշտի մը վրայ շինուած է . ունի 250,000
բնակիչ :

Հ. Մէքսիկայի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Մէքսիկա լեռնոտ և հրաբղխային երկիր մ'է .
ունի անթիւ հարուստ հանքեր :

Բնակչաց թիւն է 10,000,000 :

ԿՈՒԱԹԷՄԱԼԱ

Հ. Կուաթէմալա Ամերիկայի ո՞ր կողմն է .

Պ. Կուաթէմալա Հիւսիսային Ամերիկայի Հարա-
ւային կողմն է . Մէքսիկայի սահմաններէն կ'սկսի
և մինչեւ Բանամայի պարանոցը կը տարածուի :

Հ. Կուաթէմալա ի՞նչ երկիրներ կը պարունակէ .

Պ. Կուաթէմալա կը պարունակէ հետեւեալ եր-
կիրներն . ԿՈՒԱԹԷՄԱԼԱ , ՀՈՆՏՈՒՐԱՍ , ՍԱՆ-
ՍԱԼՎԱՏՈՐ , ՆԻՔԱՐԱԿՈՒԱ , ՔՈՍԹԱ-ՌԻՔԱ :

Հ. Կուաթէմալայի գլխաւոր քաղաքներն ո՞յք
են .

Պ. Կուաթէմալայի գլխաւոր քաղաքներն են .
Կուաթէմալա , Քօմայակուա , Սան-Սալվասոր, Մա-
նակուա , Սան-Ճօզէ :

Հ. Կուաթէմալայի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Կուաթէմալայի մէջ շատ երկրաշարժ կը պա-
տահի . ունի հարուստ շատ հանքեր . բայց բա-
նուած չեն : Բնակչաց թիւն է 2,700,000 :



Ե Ր Կ Ի Ր Ք Հ Ա Ր Ա Ի Ա Յ Ի Ն Ա Մ Ե Ր Ի Կ Ա Յ Ի

Ք Օ Լ Օ Մ Պ Ի Ա

Հ. Քօլօմպիոյ սահմաններն որո՞նք են .

Պ. Քօլօմպիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Անթիլեան ծով . Արեւմուտքէն՝ Խաղաղական Ովկիանոս . Հարաւէն՝ Բէրու և Պրագիլիա . Արեւելքէն՝ Պրագիլիա և Կուլյանա :

Հ. Քօլօմպիա ի՞նչ երկիրներ կը պարունակէ .

Պ. Քօլօմպիա կը պարունակէ ՆՈՐ ԿՐԱՆԱՏԱ, ՎԷՆԷՋՈՒԷԼԱ, ԷՔՈՒԱԹՕՐ :

Հ. Քօլօմպիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Քօլօմպիոյ բնակիչք մասամբ սպիտակ և մասամբ պղնձագոյն են : Այս երկրին մէջ կայ տեսակ մը ծառ, որոյ հիւթէն ձգախէժ (քաուչու) կը շինեն : Բնակչաց թիւն է 6,000,000 :

Կ Ո Ւ Յ Ա Ն Ա

Հ. Կուլյանայի սահմաններն որո՞նք են .

Պ. Կուլյանայի սահմաններն են . Հիւսիսէն՝ Ատլանտեան Ովկիանոս . Արեւմուտքէն՝ Քօլօմպիա և Պրագիլիա . Հարաւէն՝ Պրագիլիա . Արեւելքէն՝ Ատլանտեան Ովկիանոս :

Հ. Կուլյանա ո՞ր Տէրութեան կը վերաբերի .

Պ. Կուլյանայի ծովեզերեայ մասը կը վերաբերի

Անգղիոյ , Ֆրանսայի և Հոլանտայի . իսկ ներսերը
անկախ վայրենիներու ձեռք կը գտնուին :

Հ . Կուլյանայի վրայ ի՞նչ գիտես .

Պ . Կուլյանայի մէջ տարւոյն ութ ամիսը ան-
դադար անձրև կուգայ . մնացած չորս ամսոյ միջո-
ցին շատ տաք կ'ընէ . ունի 350,000 բնակիչ :

Պ Ր Ա Ջ Ի Լ Ի Ա

Հ . Պրագիլիա Ամերիկայի ո՞ր կողմը կ'իյնայ , և
սահմաններն որո՞նք են .

Պ . Պրագիլիա Հարաւային Ամերիկայի միջին եւ
Արեւելեան կողմը կ'իյնայ : Սահմաններն են . Հիւ-
սիսէն՝ Ատլանտեան Ովկիանոս , Կուլյանա և Քօլօմ-
պիա . Արեւմուտքէն՝ Քօլօմպիա , Բէրու , Պօլիվիա ,
Բարակոլա և Լա-Բլադա . Հարաւէն՝ Ուրուկուա
և Ատլանտեան Ովկիանոս . Արեւելքէն՝ Ատլանտ-
եան Ովկիանոս :

Հ . Պրագիլիոյ մայրաքաղաքն ո՞րն է .

Պ . Պրագիլիոյ մայրաքաղաքն է ՌԻՕ-ԵԱՆԵՅՅՐՕ՝
Ատլանտեան Ովկիանոսի վրայ շինուած է . ունի
300,000 բնակիչ :

Հ . Պրագիլիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ . Պրագիլիա պտղաբեր երկիր մ'է . ունի ամէն
տեսակ բերք , և ոսկւոյ , ադամանդի ու այլ հա-
րուստ հանքեր : Պրագիլիա ուսման և գիտութեան
մէջ շատ յառաջ գացած է : Բնակիչն է 10 միլիօն :

Բ Է Ր Ո Ի

Հ. Բէրուի սահմաններն որո՞նք են .

Պ. Բէրուի սահմաններն են . Հիւսիսէն՝ Քօլօմպիա . Արեւմուտքէն՝ Խաղաղական Ովկիանոս . Հարաւէն՝ Խաղաղական Ովկիանոս և Չիլի . Արեւելքէն՝ Պօլիվիա և Պրագիլիա :

Հ. Բէրուի մայրաքաղաքն որն է .

Պ. Բէրուի մայրաքաղաքն է ԼԻՄԱ՝ Խաղաղականի եզեր մօտ շինուած է . ունի 100,000 բնակիչ :

Հ. Բէրուի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Բէրուցիք , որք 3,000,000 կը կարծուին , ժամանակաւ այնքան հարուստ էին որ ոսկին առ ոչինչ կը գործածէին . կ'ըսուի թէ՛ Տէրութեան պալատին մէջ ոսկիէ շինուած ծառեր կային :

Պ Օ Լ Ի Վ Ի Ա

Հ. Պօլիվիա ո՞ր է .

Պ. Պօլիվիա Պրագիլիոյ Հարաւային կողմն է :

Հ. Պօլիվիոյ մայրաքաղաքն որն է .

Պ. Պօլիվիոյ մայրաքաղաքն է ՉՈՒՔԻՍԱՔԱ , որ ունի 26,000 բնակիչ :

Հ. Պօլիվիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Այս երկիրն Պօլիվիա անուն զօրապետին ձեռամբ ազատուելուն համար իւր անուամբ կոչուեցաւ ՊՕԼԻՎԻԱ : Ունի 2,000,000 բնակիչ :

Բ Ա Ր Ա Կ Ո Ւ Ա

Հ. Բարակուլայի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Բարակուլայի մեծ մասը դաշտային և ջրար-
բի է : Այս երկրէն կ'ելլէ ընտիր թէյ, բամպակ ու
շաքար : Վաճառականութիւնը ծաղկելու վրայ է .
բայց գիտութիւնք և արհեստք չատ ետ մնացած
են : Բնակչաց թիւն է 300,000 :

Մայրաքաղաքն է ԱՍՕՆԲՍԻՕՆ :

Լ Ա — Բ Լ Ա Դ Ա

Հ. Լա-Բլադա ո՞ւր է .

Պ. Լա-Բլադա Բարակուլայի և Պրազիլիոյ Հա-
րաւային կողմն է :

Հ. Լա-Բլադայի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Լա-Բլադա շատ պտղաբեր երկիր մ'է . բայց
անմշակ թողուած է : Բնակիչն է 2,500,000 : Մայ-
րաքաղաքն է ՊՈՒԷՆՏՍ-ԱՅՐԷՍ՝ 200,000 բնակչօք :

Ո Ւ Ր Ո Ւ Կ Ո Ւ Ա

Հ. Ուրուկուլայի մայրաքաղաքն ո՞րն է, և բնա-
կիչն ո՞րչափ :

Պ. Ուրուկուլայի մայրաքաղաքն է ՄՕՆԹԷՎԻՏԵՕ :
Բնակչաց թիւն է 450,000 :

Հ. Ուրուկուլայի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Ուրուկուլայի մէջ կան շատ տեսակ անասուն-
ներ, որոցմէ մեծ քանակութեամբ օտար երկիրներ
կը ղրկուին :

Զ Ի Լ Ի

Հ. Չիլի Ամերիկայի ո՞ր կողմը կ'իյնայ .

Պ. Չիլի Ամերիկայի Արեւմտեան եզերքին վրայ կ'իյնայ և Հիւսիսէն ի Հարաւ տարածուած է :

Հ. Չիլիի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Չիլի Ամերիկայի յառաջադէմ երկիրներէն մին է . հողագործութիւն և վաճառականութիւն ծաղկեալ վիճակի մէջ են :

Հ. Չիլիի մայրաքաղաքն ո՞րն է , և բնակիչն ո՞ր-
չափ է .

Պ. Չիլիի մայրաքաղաքն է ՍԱՆՔԻԱԿՕ :

Բնակչաց թիւն է 2,250,000 :

Բ Ա Ք Ա Կ Օ Ն Ի Ա

Հ. Բաթակօնիա Ամերիկայի ո՞ր կողմը կ'իյնայ և ի՞նչ գիտեւիք ունի .

Պ. Բաթակօնիա Հարաւային Ամերիկայի Հարաւային ծայրը կ'իյնայ : Բնակիչք երկայնահասակ և տգեղ են , հովուական կեանք մ' ունին և բնակութեան յարմար քաղաք չունենալով խումբ խումբ դաշտերու մէջ կը բնակին :



Ո Վ Կ Ի Ա Ն Ի Ա

Հ. Ովկիանիա Աշխարհի ո՞ր կողմը կ'իյնայ, և ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ .

Պ. Ովկիանիա Ամերիկայի ու Ասիոյ մէջ կ'իյնայ, և կը բաղկանայ Խաղաղական Ովկիանոսի մէջ ցըրուած անթիւ ու անհամար կղզեաց խումբերէ :

Հ. Ովկիանիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ. Ովկիանիոյ բնակիչն 35-40,000,000 է գրեթէ :

Հ. Ովկիանիոյ բնակչաց վրայ ի՞նչ գիտես .

Պ. Ովկիանիոյ բնակիչք դեռ խորին տգիտութեան և վայրենութեան մէջ են . խումբ խումբ հիւղերու մէջ կը բնակին և որսորդութեամբ կ'ապրին . մարդակերներ եւս կը գտնուին : Փոքր մաս մը միայն կայ, որ վայրենութենէ ելած և քիչ ու շատ կրթեալ վիճակի մէջ մտած է :

Հ. Ովկիանիա ո՞ր Տէրութեան տակ է .

Պ. Ովկիանիոյ մեծ մասը Եւրոպական այլ և այլ Տէրութեանց տակ է . բայց կան երկիրներ եւս, որք անկախ են :

Հ. Ովկիանիա ի՞նչ կլիմայ ունի .

Պ. Ովկիանիա թէեւ երկրիս ամենէն տաք կող-

մերը կը գտնուի , բայց զով և քաղցր կլիմայ մ'ու-
նի . ընդարձակ Ովկիանոսներէ փչած մեղմ հովը
միշտ կը զովացնէ երկիրը . միայն երկրին ներսերը
սաստիկ տաք կ'ընէ :

Հ . Ովկիանիա քանի՞ի կը բաժնուի .

Պ . Ովկիանիա կը բաժնուի հետեւեալ հինգ մա-
սանց . ՄԱԼԷՋԻԱ , ՄԵԼԱՆԵՋԻԱ , ՄԻՔԲՕՆԵՋԻԱ ,
ԲՕԼԻՆԵՋԻԱ , ՀԱՐԱԻԱՅԻՆ ԵՐԿԻՐՔ :

Մ Ա Լ Է Ջ Ի Ա

Հ . Մալէզիա ի՞նչ կղզիներէ կը բաղկանայ .

Պ . Մալէզիա կը բաղկանայ գլխաւորաբար հե-
տեւեալ կղզիներէ .

Ճավա՝ Ովկիանիոյ ամենէն աւելի բազմամարդ
կղզին է . հողը բարեբեր և լաւ մշակուած է . ա-
մէն տեսակ բերք կը հասցունէ : Գլխաւոր քա-
ղաքներն են Պարավիա , Սուրաբարթա :

Սուլադրա՝ լեռնային և հրաբղխային կղզի մ'է .
գետնաշարժք և փոթորիկք անպակաս են : Գլխաւոր
քաղաքներն են Բասանկ , Աւէմ :

Նշանաւոր են նաեւ Պորնէոյ , Մօլուբեան , Չէ-
լէպեան և Փիլիպեան կղզիք :

Մ Է Լ Ա Ն Է Ջ Ի Ա

Հ . Մէլանէզիա ի՞նչ կղզիներ կը պարունակէ .

Պ . Մէլանէզիա կը պարունակէ գլխաւորաբար
Աւսրալիա , որ Ափրիկէէն վերջը Աշխարհի ամե-
նէն մեծ կղզին է . Ունի 2 միլիօն բնակիչ : Այս
կղզւոյն ներսերը դեռ անծանօթ են .

Նշանաւոր են Թասմանիա, Նոր Կուլինէա կղզիք,
և Սողոմոնի, Հոգւոյն Սրբոյ Արշիպեղազոսք :

Հ. Մէլանէզիոյ վրայ ի՞նչ գիտես :

Պ. Մէլանէզիոյ բնակիչք Աշխարհի մէջ գտնուած
ամենէն վայրենի և պակասամիտ մարդիկներն են :

Մ Ի Ք Ր Օ Ն Է Ջ Ի Ա

Հ. Միքրօնէզիա ի՞նչ կղզիներէ կը բաղկանայ .

Պ. Միքրօնէզիա կը բաղկանայ անհամար կղզի-
ներէ, որոց գլխաւորներն են Աւազակաց կղզիք,
Քարօլինեան կղզիք :

Բ Օ Լ Ի Ն Է Ջ Ի Ա

Հ. Բօլինէզիոյ գլխաւոր կղզիներն որո՞նք են .

Պ. Բօլինէզիոյ գլխաւոր կղզիներն են Նաւոր-
դաց կամ Սամոա կղզիք, Բարեկամաց կղզիք, Ըն-
կերուքեան կղզիք, Մարֆիգեան կղզիք :

Հ Ա Ր Ա Ի Ա Յ Ի Ն Ե Ր Կ Ի Ր Ք

Հ. Հարաւային երկիրներն որո՞նք են .

Պ. Ովկիանիոյ Հարաւային կողմը Հարաւային
Սառուցեալ Ովկիանոսի մէջ 1772 էն ի վեր գըտ-
նուած են կղզիներ և երկիրներ, որք կը կոչուին
ՀԱՐԱԻԱՅԻՆ ԵՐԿԻՐՔ : Սոցա գոյութիւնը աշխար-
հագիտաց համար հաստատուած է. սակայն դեռ
որոշ և ստոյգ տեղեկութիւնք կը պակսին :

Գ Լ Ո Ւ Խ Գ



Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Կ Ա Մ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

Հ. Թուրքիա Աշխարհի ո՞ր կողմը կ'իյնայ .

Պ. Թուրքիա Եւրոպիոյ , Ասիոյ և Ափրիկէի մէջ տեղը կ'իյնայ :

Հ. Թուրքիա ի՞նչ մասերէ կը բաղկանայ .

Պ. Թուրքիա Եւրոպիոյ , Ասիոյ և Ափրիկէի մէջ միանգամայն երկիրներ ունենալով կը բաղկանայ երեք մասերէ , որք են .

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

ԱՓՐԻԿԵԱՆ ԹՈՒՐՔԻԱ

Հ. Կարո՞ղ ես այդ երկրաց սահմաններն ըսել .

Պ. Այո՛ . Եւրոպական Թուրքիոյ սահմաններն են .

Հիւսիսէն՝ Ռուսմանիա , Սերպիա և Աւստրիա-Հունգարիա . Արևմուտքէն՝ Աւստրիա-Հունգարիա , Գարատաղ , Ադրիական ծով և Օդրանդի ջրանցք . Հարաւէն՝ Յունաստան , Արշիպելագոս և Մարմարա . Արեւելքէն՝ Սեւ ծով :

Ասիական թուրքիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Անդրկովկաս և Սեւ ծով . Արեւմուտքէն՝ Մարմարա և Արշիպեղազոս . Հարաւէն՝ Միջերկրական ծով և Արաբիա . Արեւելքէն՝ Պարսկաստան :

Ափրիկեան թուրքիոյ սահմաններն են . Հիւսիսէն՝ Միջերկրական ծով . Արեւմուտքէն՝ Ալճերի . Հարաւէն՝ Սահարա . Արեւելքէն՝ Կարմիր ծով ⁽¹⁾ :

Հ . Թուրքիոյ եզերքը ի՞նչ ծովեր կը թրջեն .

Պ . Թուրքիոյ եզերքը կը թրջեն .

Սեւ ծով , Մարմարա , Արշիպեղազոս , Միջերկրական ծով , Ադրիական ծով և Կարմիր ծով :

Հ . Թուրքիոյ գլխաւոր ծոցերն որո՞նք են .

Պ . Թուրքիոյ գլխաւոր ծոցերն են .

Եւրոպական թուրքիոյ եզերաց վրայ՝ Պուրկազի ծոց՝ Սեւ ծովէն կազմուած : Սելանիկի ծոց՝ Արշիպեղազոսէն կազմուած :

Ասիական թուրքիոյ եզերաց վրայ՝ Նիկոմիդիոյ ծոց , Մուսանիոյ ծոց՝ Մարմարայի ծովէն կազմուած : Էսրէմիսի ծոց , Զմիւռնիոյ ծոց՝ Արշիպեղազոսէ կազմուած : Ասալիոյ ծոց , Իսկէնտերուռնի ծոց՝ Միջերկրական ծովէն կազմուած : Պարսից ծոց՝ Օմանի ծովէն կազմուած :

Ափրիկեան թուրքիոյ եզերաց վրայ՝ Սիրթի ծոց , Քապէսի ծոց՝ Միջերկրական ծովէն կազմուած :

(1) Հարկատու իշխանապետութիւնք , Առանձնաշնորհեալ Նահանգք ևայլն , Օսմանեան կայսրութեան ամբողջացուցիչ մասերն ըլլալով , սահմանք ըստ այնմ գծած ենք :

Հ. Թուրքիոյ գլխաւոր լեռներն որո՞նք են .

Պ. Թուրքիոյ գլխաւոր լեռներն են .

Եւրոպական Թուրքիոյ մէջ՝ Պալքան լեռինք ,
Սքրաննա լեռինք , Տեւրօթ լեռինք , Պիւնդու լեռինք :

Ասիական Թուրքիոյ մէջ՝ Տօրնու , Անդրսօրնու ,
Լիբանան , Անդրլիբանան : Տօրնուի գլխաւոր գա-
գաթն է Սեպուհ (Սիփան) : Անդրսօրնուի գլխա-
ւոր գագաթներն են Բիւրակն (Պիւն-Կէօզ) , Արգէնու
(Էրնիսա) , Ողիմպոս (Քէճիճ-Տաղ) : Լիբանանու
գլխաւոր գագաթն է Թափոս :

Ափրիկեան Թուրքիոյ մէջ՝ Արաբական լեռինք ,
Լիպիֆ լեռինք , Ադլաս լեռինք :

Հ. Թուրքիոյ գլխաւոր գետերն որո՞նք են .

Պ. Թուրքիոյ գլխաւոր գետերն են .

Եւրոպական Թուրքիոյ մէջ՝ Գանուր՝ Սեւ
ծովը կը թափի : Մարիճա , Գարասու , Սքրուսա ,
Վարսար՝ Արշիպեղազոսի մէջ կը թափին : Թուլննա ,
Արսա՝ Մարիճայի մէջ կը թափին : Տրին , Պոյանա՝
Ադրիական ծովը կը թափին :

Ասիական Թուրքիոյ մէջ՝ Ճորոխ (Չիւրիւֆ-Սու) ,
Իրիս (Եէճիլ-Ըրմազ) , Ալիս (Գըզըլ-Ըրմազ) , Սազա-
րիս՝ Սեւ ծովը կը թափին : Սուսուրլու՝ Մարմարայի
մէջ կը թափի : Քայիֆնու (Պաֆլը-Չայ)՝ Արշիպեղա-
զոսի մէջ կը թափի : Սիհուն , Ճիհուն՝ Միջերկրա-
կանի մէջ կը թափին : Տիգրիս (Շաթ) , Եփրատ
(Մուրատ-Չայ)՝ միանալով Շաթ-իւլ-Արապ անուանը
կ'ստանան և Պարսից ծոցը կը թափին :

Ափրիկեան Թուրքիոյ մէջ՝ Նեղոս՝ Միջերկ-

րական ծովը կը թափի :

Հ. Թուրքիոյ գլխաւոր լիճերն որո՞նք են .

Պ. Թուրքիոյ գլխաւոր լիճերն են .

Եւրոպական Թուրքիոյ մէջ՝ Շֆոսրա , Եանեսա :

Ասիական Թուրքիոյ մէջ՝ Իզնիֆի լիճ , Սապան-
հայի լիճ , Թուզ-Կէօլ , Մեռեալ լիճ , Վանայ լիճ :

Հ. Թուրքիոյ հրուանդաններն որո՞նք են .

Պ. Թուրքիոյ հրուանդաններն են .

Եւրոպական Թուրքիոյ մէջ՝ Էմինէ՝ Սեւ ծովու
եզեր վրայ է :

Ասիական Թուրքիոյ մէջ՝ Չալքը-Պուրուն , Իննէ-
Պուրուն , Քէրէմպէ՝ Սեւ ծովու եզերաց վրայ :

Հ. Թուրքիա ի՞նչ տեսակ կլիմայ ունի .

Պ. Թուրքիա ամէն տեսակ կլիմայ ունի .

Եւրոպական և Ասիական Թուրքիոյ մէջ թէեւ կը
գտնուին վայրեր , ուր սաստիկ տաք կամ սաստիկ
ցուրտ կ'ընէ . սակայն ընդհանրապէս բարեխառն
կլիմայ մ'ունին : Այս երկիրներուն մէջ անձրեւն
իւր ժամանակին կանոնաւորապէս տեղաւորվ հողն
կը պարարտացնէ և օգն կը զովացնէ :

Ափրիկեան Թուրքիոյ մէջ ամէնուրեք և միշտ
սաստիկ տաք մը կը տիրէ : Եգիպտոս՝ այս երկրին
մի մասն՝ երաշտուտ է . տարւոյն մէջ մի քանի օր
անձրեւ կը վայելէ , այն ալ Հիւսիսային կողմը միայն :
Նեղոս գետն , որ այս երկրէն կ'անցնի , տարին մի
անգամ կը յորդի , և երբ կը քաշուի , իր հետ բե-
րած կաւուտ աւազն գետին եզերաց վրայ թողլով
երկիրն կը պարարտացնէ : Այսպէս երկիրն ջրելով ,

բնակիչն սովէ կ'ազատէ : Նեղոս իւր այս յատկու
թեամբ կը կոչուի Եգիպտոսի պարգեւն (Նիւը պէրէ-
քէթ) :

* * *

Հ. Թուրքիա ե՞րբ, որո՞ւ ձեռամբ և ի՞նչպէս
հիմնուեցաւ .

Պ. Երեքտասաներորդ դարուն մէջ Սելճուգեան
Թուրք ցեղէն ճիւղ մը, իրենց Օսման անուն գլխա-
ւորին առաջնորդութեամբ Ասիոյ խորերէն յԱրեւ-
մուտս քալելով Փոքր Ասիոյ մէջ գտնուող Թուրք
իշխանաց հետ կռուեցաւ, նշանաւոր յաղթու-
թեամբք երկիրներ գրաւեց, ընդ որս էր Իկոնիոն
(Քօնեա), և հիմնեց զօրաւոր Տէրութիւն մը :

Օսմանի յաջորդք ընդարձակեցին իրենց երկի-
րըն, Եւրոպական Թուրքիա անցան, անդ եւս մե-
ծամեծ պատերազմներ ըրին, նշանաւոր յաղթու-
թիւններ տարին և ընդարձակ երկիրներ գրաւե-
ցին : Սուլթան Մէհմէտ Բ. որ Օսմանի յաջորդաց մին
է, 1453ին Կոստանդնուպօլիսն առաւ և անդ փոխա-
դրեց իւր մայրաքաղաքն, ջնջեց Արեւմտեան Կայս-
րութիւնը և Օսմանեան Կայսրութեան փոխարկեց :

Այսպէս հիմնուեցաւ Օսմանեան Կայսրութիւնը,
որ հետզհետէ զօրացաւ և արդի ծաղկեալ վիճակին
հասաւ :

Հ. Օսմանեան Կայսրութեան վրայ ո՞վ կը տիրէ .

Պ. Օսման այս Կայսրութեան հիմնադիրն ըլլա-
լով իւր որդիքն իրաւունք ունեցան ժառանգելու
իրենց հօր գահն : Այժմ իւր սերունդն է որ ժա-
ռանգական իրաւամբ որդւոց յորդի կը տիրէ երկ-

ըին վրայ և կը կոչուի Օսմանեան Հարստութիւն
կամ Օսմանեան Տուն :

Հ. Օսմանեան կայսերք ի՞նչ տիտղոսներ կը կրեն .

Պ. Օսմանեան կայսերք կը կոչուին Սուլթան .
բաց աստի խալիֆա տիտղոսն ևս կը կրեն :

Հ. Արդի տիրող կայսրն ո՞վ է .

Պ. Արդի տիրող կայսրն է ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ
ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆ ՂԱԶԻ , բարեխնամ ինքնակալն ,
34^{րդ} Թագաւոր Տանն Օսմանեան , որդի Սուլթան
Ապտ-իւլ-Մէճիտ Խանի , ծնեալ 10/22 Սեպտեմբեր
1842 , որ 19/31 Օգոստոս 1876է ի վեր կը գահա-
կալէ , և խաղաղապէս կը կառավարէ երկիրը :

Հ. Ո՞չք են Տէրութեան բարձր Պաշտօնեայք .

Պ. Տէրութեան բարձր Պաշտօնեայք են .

Շէյխ-Իռ-Իսլամն՝ կրօնական գործոց համար .
Մեծ Եպարքան (Սատր-Ազամ)՝ Քաղաքական գործոց
համար : Յետոյ կուգան Ներքին (Տախիլիյէ) , Արտա-
քին (Խարիճիյէ) , Ծովային (Պահրիյէ) , Արդարութեան
(Ասլիյէ) , Ելմսական (Մալիյէ) , Հասարակաց Շինուա-
ծոց (Նաֆաա) և այլ գործոց Նախարարներն , որք
կը կազմեն Նախարարաց Խորհուրդն : Սոցա իւրա-
քանչիւրն զատ զատ Նախարարութիւններ են և ու-
նին ստորակարգեալ պաշտօնեայներ :

Շէյխ-իւլ-Իսլամն ևս ունի ստորակարգեալ
պաշտօնեայներ , որք են Իւլէմայի և Միւֆթիի :

Հ. Օսմանեան կայսրութեան երկիրներն ի՞նչ
վարչական բաժանումներ ունին և ի՞նչպէս կը կա-
ռավարուին :

Պ. Օսմանեան կայսրութեան յԵւրոպա, յԱսիա և յԱփրիկէ ունեցած երկիրներն կը բաժնուին Նահանգաց (Վիլայէթ). Նահանգներն կը բաժնուին Քաւառաց (Սաննագ) :

Նահանգաց կառավարութիւնը յանձնուած է կուսակալաց (Վալի). Քաւառաց կառավարութիւնը՝ կառավարչաց (Միւթէսարըֆ), որոնք հաստատեալ օրինաց և կարգաց համեմատ երկիրն կը կառավարեն և պատասխանատու են ներքին գործոց Նախարարութեան :

Հ. Օսմանեան կայսրութեան երկիրներն քանի՞ նահանգի կը բաժնուին .

Պ. Օսմանեան կայսրութեան երկիրներն կը բաժնուին 30 նահանգի : Սոցա եօթը՝ Եւրոպական թուրքիոյ, քսանը՝ Ասիական թուրքիոյ, մէկը՝ Ափրիկեան թուրքիոյ և երկուքը՝ Արաբիոյ մէջ են :

Եւրոպական թուրքիոյ մէջ են կոստանդնուպօլիս (Իսթամպօլ), Ադրիանուպօլիս (Էսիրնէ), Սելանիկ, Մանասդըր, Եանեա, Քօսովա, Շօսրա :

Ասիական թուրքիոյ մէջ են Արշիպեղազոս (Ճէզայիրը-Պահիրը-Սէֆիս), Պրուսա (Խիւսավէնսիկեար), Զմիւռնիս (Այսըն), Քօնեա, Էնկիւրիւ, Ասանա, Քասթեմուննի, Սըվազ, Տրապիզոն, Էրզրում, Պիթլիզ, Տիարպէֆիր, Վան, Խարբուրդ (Մամուրէթ-իւլ-Ազիզ), Հալէպ, Պէրուք, Սուրիա, Պաղսաս, Մուսուլ, Պասրա :

Ափրիկեան թուրքիոյ մէջ է Թարապոլուս :

Արաբիոյ մէջ են Հիմազ, Եէմէն :

Հ. Թուրքիոյ մայրաքաղաքն ո՞րն է .

Պ. Թուրքիոյ մայրաքաղաքն է ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕ-
ԼԻՍ՝ Վոսփորի , Ոսկեղջիւրի և մասամբ Մարմա-
րայի եզերաց վրայ կառուցուած :

Ամբողջ քաղաքը Վոսփորով և Ոսկեղջիւրով
հետեւեալ երեք մասանց բաժնուած է . Իսթամպօլ՝
Ոսկեղջիւրի աջ եզեր վրայ . Բերա՝ ձախ եզեր վրայ .
Իւսկիւսար՝ Ասիական եզեր վրայ : Վոսփորի ,
Ոսկեղջիւրի և Մարմարայի եզերաց վրայ կան ար-
ուարձաններ և գիւղեր , որոնք այս երեք մասանց
միոյն կամ միւսին կը վերաբերին :

Կ. Պօլիս ծովէն դիտելով սքանչելի դիրք մ'ու-
նի : Հոյակապ մզկիթներ , գեղեցիկ պալատներ և
շէնքեր հիանալի տեսք մը տուած են նմա :

Մզկիթներուն մէջ նշանաւոր են Այա-Սոֆիայի ,
Սուլթան Ահմէտի , Սիւլէյմանիյէի , Սուլթան Մէհմէ-
տի և Էյուլպի մզկիթներն :

Պալատաց մէջ նշանաւոր են Երլսըզի , Տոլմա-
Պաղչէի , Զրաղանի պալատներն և Թօփ-Գաբուլի
Սէրայն :

Շէնքերուն մէջ նշանաւոր են Մեծ Զարեըն ,
Մըսըր Զարեըսըն և Խաներն :

Կ. Պօլիս ունի (ըստ 1885 ի մարդահամարի)
873,565 բնակիչ երկու սեռէ , որք կը բաղկանան
այլ և այլ Ազգերէ , ինչպէս են . իրենց բազմամար-
դութեան կարգաւ , Մահմետական , Յոյն , Հայ ,
օտար հպատակ , Հրեայ և այլն : Հայոց թիւն է
149,590 երկու սեռէ :

Կ. Պօլիս իբր կեդրոն Օսմանեան Կայսրութեան ունի գիտական ամէն ճիւղի վերաբերեալ կառավարական վարժարաններ . բաց աստի Մահմետականք և ուրիշ ամէն հասարակութիւնք ունին աղօթատեղիներ , եկեղեցիներ , ամէն կարգի վարժարաններ , տպարաններ , գրատուններ և թանգարաններ :

Կ. Պօլիս ունի բանուկ վաճառականութիւն մը և ծաղկեալ արհեստներ : Ունի նաև բարեխառն կլիմայ , մաքուր և առողջարար օդ , մանաւանդ Վոսփորի գեղազուարճ ափանց վրայ :

Հ. Եւրոպական Թուրքիոյ ծովեզերեայ քաղաքներն որո՞նք են .

Պ. Եւրոպական Թուրքիոյ ծովեզերեայ քաղաքներն են .

Մարմարայի վրայ՝ Ռոսնոսթօ (Թէֆիր-Տաղ)՝ Ադրիանուպօլսոյ նահանգին գլխաւոր նաւահանգիստըն է ի Մարմարա : Բնակիչք մեծ մասամբ Հայ են . ունին Ս. Թագաւոր անուամբ եկեղեցի մը , որ ուխտատեղի է :

Կէլիպօլու՝ Տարտանելի նեղուցին բերանը վաճառաչահ և զինուորական նաւահանգիստ մ'է : Բընակչաց մէջ կան Հայեր :

Արչիպեղագոսի վրայ՝ Տէսէ-Աղան՝ Ադրիանուպօլսոյ նահանգին գլխաւոր և նորակառոյց նաւահանգիստն է յԱրչիպեղագոս : Երկաթուղւով միացած է Ադրիանուպօլսոյ հետ :

Սելանիկ՝ համանուն ծոցին խորը վաճառաչահ

նաւահանգիստ մ'է . ունի շատ հնութիւններ : Սե-
լանիկ վերջին տարւոյն մէջ երկաթուղւով Եւրոպա-
կան քաղաքաց հետ միանալով , այժմ ունի վաճա-
ռականական ամենանշանաւոր դիրք և փառաւոր
ապագայ մը : Բնակչաց թիւն է 100,000՝ մեծ մա-
սամբ Հրեայ : Հայոց թիւն է 200 :

Հ . Եւրոպական թուրքիոյ ցամաքային քաղաք-
ներն որո՞նք են .

Պ . Եւրոպական թուրքիոյ ցամաքային քաղաք-
ներն են .

Ադրիանուպօլիս (Էսիրնէ)՝ Մարիճա և թունճա
գետոց միացած կէտին վրայ շինուած՝ հին քաղաք
մ'է : Ադրիանուպօլիս նախ քան զառումն Կ . Պօլսոյ
Օսմանեան Տէրութեան մայրաքաղաքն էր : Ունի
100,000 բնակիչ , որոց մէջ կան թուրքախօս Հայեր :

Մանասդըր՝ լեռնադաշտի մը վրայ կառուցուած
զինուորական մեծ քաղաք մ'է : Ունի 40,000 Մահ-
մետական բնակիչ :

Եանեա՝ համանուն լիճին վրայ շինուած է :

Շօսրա՝ համանուն լիճին վրայ հին և ծաղկեալ
քաղաք մ'է : Ունի 35,000 Ալպանիացի բնակիչ :

Հ . Ասիական թուրքիոյ ծովեզերեայ քաղաքնե-
րըն որո՞նք են .

Պ . Ասիական թուրքիոյ ծովեզերեայ քաղաքնե-
րըն են .

Սեւ ծովու վրայ՝ Տրապիզոն՝ վաճառաչահ նա-
ւահանգիստ մ'է : Դեռ Անդրկովկասու մէջ երկա-
թուղիներ չշինուած այս քաղաքն Պարսկաստանի

գլխաւոր ճանապարհն էր : Բնակչաց թիւն է 45,000 ,
որոց 6,000ը Հայ է :

Սամսոն՝ բանուկ նաւահանգիստ մը և Փոքր Ա-
սիոյ ներսերը երթալու գլխաւոր ճանապարհն է :
Գլխաւոր բերքերն են ծխախոտ և արմտիք :
Բնակչաց մէջ կայ 2,000 Հայ :

Սինապ՝ բանուկ նաւահանգիստ մ'է . կ'արտա-
դրէ ատաղձ :

Էրէյի՝ ունի ածխոյ հանքեր :

Մարմարայի վրայ՝ Նիկոմիդիա (Իզմիտ)՝ հա-
մանուն ծոցին խորը բլուրի մը վրայ բարձրացած
հին քաղաք մ'է : Կ . Պօլսոյ հետ երկաթուղւով մի-
ացած՝ հետզհետէ ծաղկելու վրայ է : Ունի նաւա-
րան և ասուոյ ու գլխարկի գործարաններ : Բնակ-
չաց մէջ կայ 3,850 Հայ , կէս առ կէս արու և էգ :

Կէմլէյիկ , Մուսանիա , Պանսրմա՝ Պրուսայի նա-
հանգին նաւահանգիստներն են ի Մարմարա :

Արշիպեղազոսի վրայ՝ Զմիւռնիա (Իզմիր)՝ հա-
մանուն ծոցին խորը կառուցեալ՝ Փոքր Ասիոյ նը-
շանաւորագոյն նաւահանգիստն է : Ունի քարափ
մը և մաքուր շէնքեր : Ներքին քաղաքաց հետ եր-
կաթուղւով միացած ըլլալով վաճառականութիւնը
ա՛յն աստիճանի ծաղկեալ է որ Կ . Պօլիսն կը գե-
րազանցէ : Բնակչաց թիւն է 200,000՝ Յոյն , Հայ ,
Թուրք , Եւրոպացի , Հրեայ : Հայք 7,000 են . ու-
նին Եկեղեցի , Առաջնորդարան և Սպարթալեանի
ծախիւք շինուած հոյակապ հիւանդանոց մը :

Միջերկրականի վրայ՝ Մէրսին՝ Ատանայի նա-

հանգին նաւահանգիստն է . աստի կը մեկնի Ատա-
նայի երկաթուղին :

Իսկէնցէրուն՝ համանուն ծոցին խորը՝ Հալէպի
նահանգին նաւահանգիստն է : Ունի վատ օդ :

Պէրուք՝ Սուրիոյ գլխաւոր նաւահանգիստն է .
ունի նորաշէն մաս մը , ուր կը գտնուին գեղեցիկ
տուներ : Բնակչաց մէջ կան բազում Եւրոպացիք :

Հ . Ասիական Թուրքիոյ ցամաքային քաղաքներն
որո՞նք են .

Պ . Ասիական Թուրքիոյ ցամաքային քաղաքներն
են .

Պրուսա՝ Ողիմպոս լեռան ստորոտն գեղածիծաղ
դրիւք անուանի քաղաք մ'է : Մինչեւ 1360 Օսմ .
Տէրութեան մայրաքաղաքն էր : Ունի հոյակապ մրզ-
կիթներ , առողջարար ջերմուկներ և մետաքսեղէն
ձեռագործներ : Բնակչաց թիւն է 40,000 : Հայք
4,000 են և ընդհանրապէս թուրքերէն կը խօսին :

Քօնեա՝ նախնեաց իկոնիոնն և Սելճուգեանց
մայրաքաղաքն , ունի նշանաւոր մզկիթներ և հին
պալատներու աւերակներ :

Քաղասիա (Էնկիւրիւ)՝ բարձր լեռնադաշտի մը
վրայ կառուցեալ է : Ունի նշանաւոր մզկիթ մը և
Հռովմէական հնութիւններ : Նշանաւոր են այժի
բուրդն (թիֆթիկ) , շալն , մետաքսանման սօֆն ,
մեղրն և ապուխտն : Բնակչաց թիւն է 30 000 , որոց
8,000 ը Հայ է :

Կեսարիա (Քայսերի)՝ Արգէոս լեռան ստո-
րտան վաճառաշահ քաղաք մ'է . նշանաւոր է ա-

պուխտն : Բնակչաց մէջ կան Թուրքախօս Հայեր :
Կեսարիոյ մօտ է Ս. Կարապետի վանքն :

Ասանա՝ Սիհուն գետի վրայ վաճառաչահ քա-
ղաք մ'է : Բերքերն են բամբակ , բուրդ , սուսամ :
Նշանաւոր են կամուրջն և Ուլու Ճամին :

Զէյթուն՝ լեռնային երկրի մը մէջ 3,000 բնակչօք
հայարնակ քաղաք մ'է :

Սիս՝ աստ հանտատուած է Կիլիկիոյ Կաթողիկո-
սութեան Աթոռն :

Քասթեմունի՝ գեղեցիկ հովտի մը մէջ Ալիսի մէկ
ճիւղին վրայ կառուցուած է : Ունի պղնձի հան-
քեր : Բնակչաց թիւն է 30,000՝ մեծ մասամբ Թուրք :

Սերասիա (Սըվազ)՝ Ալիս գետի մօտ շին-
ուած պարսպապատ հին քաղաք մ'է : Ունի անշուք
վիճակ , նեղ և աղտոտ փողոցներ և քայքայեալ
հին բերդեր : Մխիթարեանց հիմնադիրն՝ Մխիթար
Աբբայ՝ հոս ծնած է 1676ին : Բնակչաց թիւն է
30,000 , որոց 12,000 ը Հայ է :

Եւդոկիա (Թօֆաթ)՝ Իրիս գետի մօտ Փոքր
Ասիոյ գեղեցիկ քաղաքներէն մին է : Մօտը կը գըտ-
նուին Կումանա քաղաքին աւերակներն և Ոսկեբե-
րանի վանքն : Կ'արտադրէ պղնձեղէն անօթներ և
բամբակեղէն գործուածներ : Բնակչաց թիւն է
30,000 , որոց 10,000 ը Հայ է :

Մարզուան՝ բարեբեր դաշտի մը մէջ կառուց-
եալ է : Ունի 20,000 բնակիչ , որոց մեծ մասը հին
Անիէ գաղթած Հայեր են :

Կարին (Էրզրում)՝ ընդարձակ լեռնադաշտի մը

վրայ կառուցուած բերդաքաղաք մ'է : Ունի հնու-
թիւններ , յորս նշանաւոր են Ուլու ձամին և
Զիճթէ Միցարէն : Կարին Ասիական Թուրքիոյ Հա-
րաւային մասանց հետ հաղորդակցութեան մէջ
է . Պարսկաստանի ու Կովկասու վաճառականու-
թեան ուղին և վաճառաց գլխաւոր շտեմարանն
է : Բնակչաց թիւն է 50 000՝ Թուրք , Հայ , Պարսիկ ,
որք կ'զբաղին երկրագործութեամբ և վաճառակա-
նութեամբ : Հայոց թիւն է 10,000 :

Երիզա (Երզնկա)՝ Եփրատայ Արեւմտեան ճիւ-
ղին մօտ է : Մերձ է Թիլ աւանն , ուր թաղուած
են Ս . Արիստակէս և Մեծն Ներսէս : Բնակչաց թի-
ւըն է 25,000 , որոց 5,000 ը Հայ է :

Վան՝ հինն Շամիրամակերս՝ Վանայ լիճին Արե-
ւելեան եզեր մօտ քարաժայռի մը վրայ կառուց-
եալ բերդաքաղաք մ'է : Ունի հնութիւններ , վի-
մափոր շէնքեր և բեւեռագիր արձանագրութիւն-
ներ : Բնակչաց թիւն է 30,000 , որոց 20,000 ը Հայ է :

Վանայ լիճին մէջ են Աղթամար , Լիւմ և Կսուց
կղզիներն , որք ունին մէկ մէկ վանք : Աղթամա-
րայ մէջ է Աղթամարայ Կաթողիկոսութեան Աթոռն :

Վանայ հարաւային կողմն է Նարեկայ վանքն ,
որոյ միաբաններէն էր Ս . Գրիգոր Նարեկացին՝
Նարեկ գրքին հեղինակն :

Բաղէժ (Պիթլիզ)՝ Վանայ լիճին Արեւմտեան
կողմը երեք ձորերու միացած կէտին վրայ շինուած՝
անառիկ բերդով վաճառաշահ քաղաք մ'է : Ունի
գեղեցիկ պարտէզներ և բամբակեղէն գործուածներ :

Բնակչաց թիւն է 20,000, որոց 6,000ը Հայ է :

Մուտ՝ զառիվայրի մը վրայ կառուցուած՝ ունի կիսակործան հին բերդեր և անշուք շէնքեր : Բնակչաց թիւն է 15,000, որոց 6,000ը Հայ է : Մշոյ մօտ է Ս. Կառապետի հռչակաւոր վանքն, ի հնումն՝ Գլակայ վանք, զոր Ս. Գրիգոր Լուսաւորիչ կանգնած է : Ս. Կարապետի մօտ է Աւետիսեան, ուր թաղուած է Ս. Սահակ Հայրապետն :

Խարբուրդ՝ Եփրատայ մօտ քարալերան մը վրայ կառուցուած՝ ունի հին բերդեր : Բնակչաց թիւն է 15,000, որոց 2,000ը Հայ է : Քարալերան ստորոտն է Նոր-Խարբուրդ (Մէզիրէ) նորաշէն փոքր քաղաքն, ուր են կառավարական պաշտօնատունք :

Ակն (Եկին)՝ Եփրատայ աջ եզեր վրայ կառուցուած՝ ունի գեղեցիկ պարտէզներ, այգեստաններ և բամբակեղէն գործուածներ : Բնակչաց թիւն է 10,000՝ մեծ մասամբ Հայ, որ հին Անիէն գաղթած են : Ակնայ մօտ է Հռոմկլա, ուր կը գտնուի Ս. Ներսէս Շնորհալուոյ գերեզմանը :

Տիգրանակերտ (Տիարպէփր)՝ Տիգրիսի Արեւմտեան ճիւղին վրայ կառուցուած հին քաղաք մ'է : Ունի լայն և հզօր պարիսպներ և Յոյն ու Արաբացի արձանագրութիւնք : Բնակչաց թիւն է 40,000՝ Քիւրտ, Ասորի, Յոյն, Հրեայ : Հայք 6,000 են :

Բերիա (Հալէպ)՝ հարուստ և վաճառաչան քաղաք մ'է : Ունի լայն և բարձր պարիսպ : Բերիա ժամանակաւ բազմամարդ և ծաղկեալ վիճակի մէջ էր, բայց 1822ի գետնաշարժով կործանեցաւ .

այժմ ունի 100,000 բնակիչ, որոց 7,000 ը Հայ է : Գլխաւոր բերքերն են մետաքս, գխտոր, մեղրամոմ :

Դամասկոս (Շամ)՝ Աշխարհի ամենէն հին քաղաքներէն մին է : Ունի մեծամեծ մզկիթներ, գեղեցիկ տուներ : Արհեստք և վաճառականութիւն ծաղկեալ վիճակի մէջ են : Գլխաւոր բերքերն են մրգեղէն, մեղրամոմ, ընտիր այծ, ձի և ոչխար : Բնակչաց թիւն է 150,000 :

Երուսաղէմ՝ ժայռոտ և մերկ երկրի մը մէջ կառուցուած՝ Քրիստոնէութեան ամենէն հռչակաւոր վայրն է : Քրիստոնեայ Ազգաց շատեր աստ ունին իրենց սրբազան վայրերն, վանքերն և ուխտատեղիներն, ուր ամէն տարի գունդագունդ կը դիմեն յուխտագնացութիւն : Սիօն անուանեալ թաղին մէջ է Հայոց Ս. Յակոբբայ մեծ վանքն, որ գլխաւոր ուխտատեղի է : Վանքն ունի եկեղեցի, վարժարան, տպարան, գրատուն և ուխտաւորաց համար 1,000 սենեակ : Աստ հաստատուած է Ս. Երուսաղիմայ Հայոց Պատրիարքութիւնը :

Երուսաղիմայ մօտ են Տէրունական վայրերը, ինչպէս են. Բէթլեհեմ, Երիֆով, Գալիլիա, Նազարէթ, Տիրեբիա, Կափառնայում, Բեթանիա, Չիթենեաց լեռ, Գողգոթա, և այլն :

Մուսուլ՝ Տիգրիսի վրայ վաճառաշահ քաղաք մ'է. մօտերն են հին Նինուէի աւերակներն :

Պաղսաս՝ Տիգրիսի վրայ կառուցուած՝ Պարսկաստանի և Հնդկաստանի հետ բամբակի, մետաքսի ու կաշիի գործեր կ'ընէ : Բնակչաց թիւն է

60,000, յորում կան 90 տուն Հայ :

Պատրա՛ Շաթ-իւլ-Արապի վրայ վաճառաչահ եւ նշանաւոր նաւահանգիստն և Ասիական թուրքիոյ գլխաւոր վերջին քաղաքն է յԱրևելս :

Հ. Թուրքիոյ բնակչաց թիւն ո՞րչափ է .

Պ. Թուրքիոյ բնակչաց թիւն է 34,318,000, որք

կը գտնուին հետեւեալ երկիրներուն մէջ .

Եւրոպական թուրքիա 5,000,000

Ասիական թուրքիա և յԱրաբիա 16,000,000

Ափրիկեան թուրքիա (Թարապլուս միայն) 1,000,000

Հարկատու Իշխանապետութիւնք ,

Առանձնաշնորհեալ նահանգք , և այլն . 12,318,000
34,318,000

Հ. Այս բնակիչք ի՞նչ Ազգերէ կը բաղկանան .

Պ. Այս բնակիչք կը բաղկանան այլ և այլ Ազգերէ , ինչպէս են . Մահմետական , Յոյն , Հայ , Պուլկար , Սլաւ , Եւրոպացի , Հրեայ և այլն :

Հ. Օսմանեան Տէրութեան կրօնքն ի՞նչ է .

Պ. Օսմանեան Տէրութեան կրօնքն է Մահմետականութիւն : Սակայն թուրքիոյ մէջ այլ և այլ Ազգէ բնակիչներ գտնուելով Մահմետականութենէ զատ կայ նաեւ Քրիստոնէութիւն և Հրէութիւն : Մեր Օգոստափառ Սուլթան Ապա-իւլ-Համիտ Բ. ազատամիտ Կայսրն իւր Երջանկայիշատակ նախորդաց ընթացքին հետեւելով այս ամէն Ազգաց կրօնական զգացումներն կը յարգէ : Այս կրօնական ազատութեան շնորհիւ թուրքիոյ մէջ ամէն ոք իւր կրօնն

կը պաշտէ ա՛յնքան ազատութեամբ, որքան չեն վայելեր Քրիստոնեայք և Հրեայք ուրիշ երկրի մը մէջ :

Հ. Թուրքիա ի՞նչ վիճակի մէջ է .

Պ. Թուրքիա երկար ատեն յետադէմ վիճակի մէջ էր . բայց այժմ մեր Օգոստափառ Սուլթան Ապտիւլ-Համիտ Բ. յառաջադիմասէր Կայսեր ջանից շընորհիւ բոլորովին կերպարանափոխ եղած է :

Ամէնուրեք դպրոցներ շինուած և շինուելու վըրայ են . ուսմունք և գիտութիւնք ընդհանրանալու վիճակին մէջ են : Մայրաքաղաքի բարձրագոյն վարժարանաց վիճակն հասած է կատարելութեան մը, որ գրեթէ Եւրոպիոյ վարժարանաց կը հասնի :

Երկաթուղեաց շինութեան մեծ խնամ տարուելով այսօր Կ. Պօլիս և Սելանիկ ուղղակի Եւրոպական քաղաքաց հետ հաղորդակցութեան մէջ են : Զմիւռնիոյ և Նիկոմիդիոյ երկաթուղւոյ գծերն դէպի ներսերը երկարելու սկզբնաւորութիւնը եղած է :

Ասիական Թուրքիոյ բոլոր Նահանգաց մէջ խըճուղեաց շինութիւնք քանի տարիներէ ի վեր սկսած և շատ Նահանգաց մէջ աւարտած ըլլալով յարաբերութիւնք բաւական դիւրացած են :

Հ. Թուրքիոյ վաճառականութիւնը ի՞նչ վիճակի մէջ է .

Պ. Թուրքիոյ վաճառականութիւնը հետզհետէ յառաջ երթալու վրայ է : Կ. Պօլիս ունի արդէն բանուկ վաճառականութիւն մը . Զմիւռնիոյ վաճառականութիւնը Եւրոպիոյ վաճառաչահ քաղաքաց

հետ մրցելու աստիճանին մէջ է. Սեւանիկ ունի վաճառականական փայլուն ապագայ մը, իսկ ծովեզերեայ քաղաքք, որք ներքին քաղաքաց բերքերն դուրս կը բերեն, ունին ոչ սակաւ շարժուն վիճակ մը:

Հ. Թուրքիոյ գլխաւոր բերքերն որո՞նք են.

Պ. Թուրքիոյ գլխաւոր բերքերն են արմտիք, բուրդ, մետաքս, բամպակ, թիֆթիկ, կաշի, իւղ, նուշ, ծխախոտ, գլխտոր, ափիոն, խաղող, բոժոժ (գօզա), վարդի իւղ (ցնդական) և այլն:

Հ. Թուրքիոյ արհեստներն ի՞նչ վիճակի մէջ են.

Պ. Թուրքիոյ արհեստներն հին ատենէ ի վեր ունին մեծ համբաւ. և թէև Եւրոպական արհեստից կատարելութիւնը չունին, սակայն ունին նշանաւոր յատկութիւններ, ինչպէս են. գոյնի հաստատութիւն և տոկունութիւն:

Այսպէս նշանաւոր են. կապերտագործութիւն, ներկարարութիւն, ոսկերչութիւն, ժամագործութիւն և այլ արհեստներ:

* * *

Հ. Օսմանեան կայսրութիւնը նահանգներէն զատ ուրիշ ի՞նչ երկիրներ կը պարունակէ.

Պ. Օսմանեան կայսրութիւնը կը պարունակէ նաև ԵՔԻՊՏՈՍ (ԵԶՍԸՐ), ՊՈԻԼԿԱՐԻԱ, ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲՈՒՄԷԼԻ (ՇԱՐԳԻ ԲՈՒՄԷԼԻ), ԿԻՐԻՏ, ՍՈՒՍԱՄ, ԹՈՒՆՈՒՋ, ՊՈՍԵԱ-ՀԵՐՍԵՔ, ԿԻՊՐՈՍ:

Հ. Եգիպտոս ո՞ր երկրին մէջ է, և սահմաններն որո՞նք են.

Պ. Եգիպտոս Ափրիկեան Թուրքիոյ Արեւելեան կողմն է: Սահմաններն են. Հիւսիսէն՝ Միջերկրա-

կան ծով. Արեւմուտքէն՝ Թարապլուս . Հարա-
ւէն՝ Նուպիա . Արեւելքէն՝ Կարմիր ծով :

Հ. Եգիպտոսի վրայ ի՞նչ գիտես .

Պ. Եգիպտոս թէև Օսմանեան Կայսրութեան
ամբողջացուցիչ մի մասն կը կազմէ , սակայն ինքն
առանձինն կը կառավարուի . ունի յատուկ օրէնք-
ներ և ժողովներ : Օսմանեան գանձուն տարեկան
հարկ մը կը վճարէ , և այսու կը կոչուի ՀԱՐԿԱՏՈՒ ԻՇ-
ԽԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ : Կառավարութեան ղէկը կը գտնուի
ԻՇԽԱՆԻ մը ձեռքը , որ Թուրքիոյ Կայսերաց տի-
րապետութեան նման : Ժառանգական իրաւամբ երկ-
րին վրայ կը տիրէ , և կը կոչուի ԽՏԻՎ ԿԱՄՓ ՓՈՒՄԱՐՔԱՅ :

Հ. Եգիպտոսի բնակիչն ո՞րչափ է .

Պ. Եգիպտոսի բնակիչն է 5,500,000 :

Հ. Եգիպտոսի մայրաքաղաքն և գլխաւոր քա-
ղաքներն որո՞նք են .

Պ. Եգիպտոսի մայրաքաղաքն է ԳԱՀԻՐԷ (ՄԸ-
ՍԸԸ)՝ Նեղոսի մօտ կառուցուած՝ կը բաղկանայ
հին և նոր մասերէ . հին մասին փողոցները ընդ-
հանրապէս նեղ և անկանոն են . նոր մասին մէջ
կը գտնուին գեղեցիկ տուններ , պարտէզներ եւ
Եւրոպական թաղեր : Բնակչաց թիւն է 340,000 :

Գահիրէի մօտ է հին Մեմփիս քաղաքին վայ-
րըն , անուանի Բուրգերն և գետնափոր Գերեզման-
ներն , ուր կը գտնուին 3,000 տարիէ ի վեր պահ-
ուած Մումեայներ :

Գլխաւոր քաղաքներն են Ադեֆաանդրիա (Իս-
կէնսէրիէ)՝ Միջերկրականի վրայ Եգիպտոսի գըլ-

խաւոր նաւահանգիստն է . ունի նոր և եւրոպա-
կան ճաշակաւ շինուած թաղեր : Փոր-Սայիս՝ Մի-
ջերկրականի վրայ՝ Սուէզի ջրանցքին բերանը նոր
նաւահանգիստ մ'է : Սուէզ՝ համանուն ծոցին խորը
նշանաւոր նաւահանգիստ մ'է . ջրանցքին բացու-
մէն ի վեր մեծ կարեւորութիւն ստացած է :

Հ. Եգիպտոսի Իշխանութեան տակ ի՞նչ երկիր
կայ :

Պ. Եգիպտոսի Իշխանութեան տակ է ՆՈՒՊԻԱ,
որ Հարաւային սահմաններէն կ'սկսի և մինչեւ
Սուտան կը տարածուի : Արեւմտեան կողմն է՝ Լիբիոյ
անապատն . Արեւելեան կողմն է՝ Կարմիր ծովն եւ
Հապէշիստան : Բաց ի Նեղոսի և իւր գետակներու
հովիտներէն , Նուպիա կը բաղկանայ անջրդի և ա-
ւազուտ անապատներէ : Գլխաւոր քաղաքներն են
Քարթում , Տօնկօլա , Սուախիմ :

Բնակչաց թիւն գրեթէ 1,500,000 է :

Հ. Պուլկարիա ո՞ր երկրին մէջ է , և սահման-
ներն որո՞նք են .

Պ. Պուլկարիա եւրոպական թուրքիոյ մէջ է :
Սահմաններն են . Հիւսիսէն՝ Ռումանիա , որմէ Դա-
նուբ գետով կը բաժնուի . Արեւմուտքէն՝ Սեր-
պիա . Հարաւէն՝ Արեւելեան Րումէլի . Արեւելքէն՝
Սեւ ծով :

Հ. Պուլկարիոյ վրայ ի՞նչ գիտես .

Պ. Պուլկարիա ՀԱՐԿԱՏՈՒ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ մ'է . այ-
սու Օսմանեան գանձուն տարեկան հարկ մը կը վը-
ճարէ : Ինք կ'ընտրէ իւր ԻՇԽԱՆՆ , և Օսմանեան կայ-

սրութիւնք ու Եւրոպական Տէրութիւնք կը վա-
ւերացնեն . ինք կը հաստատէ իւր կարգերն և օ-
րէնքներն , և ինքզինք կը կառավարէ :

Հ . Պուլկարիոյ բնակիչն ո՞րչափ է .

Պ . Պուլկարիոյ բնակիչն է 2,300,000 :

Հ . Պուլկարիոյ մայրաքաղաքն և գլխաւոր քա-
ղաքներն որո՞նք են .

Պ . Պուլկարիոյ մայրաքաղաքն է ՍՕՅԻԱ՝ Վիթօլ
լերան ստորոտն կառուցուած . ունի նորաշէն
թաղեր : Բնակչաց թիւն է 30,400 :

Գլխաւոր քաղաքներն են Ռուսնուլ՝ Դանուբի
վրայ կառուցեալ՝ երկաթ ուղւով Վառնայի հետ
միացած է : Վառնա՝ Սեւ ծովու վրայ գլխաւոր
նաւահանգիստ մ'է . բնակչաց մէջ կան Հայեր :
Թոնսովա՝ Պալքանի ստորոտն կառուցեալ՝ Ազգային
Ժողովին ժողովատեղին է : Շոււլու՝ անուանի բեր-
դաքաղաք մ'է : Բլէվնա՝ նշանաւոր է Օսմանեան
բանակին քաջագործութեամբն ընդդէմ Ռուսաց :

Հ . Արեւելեան Բուլմէլի ո՞ր երկրին մէջ է , և
սահմաններն որո՞նք են .

Պ . Արեւելեան Բուլմէլի Եւրոպական Թուրքիոյ
մէջ է : Սահմաններն են . Հիւսիսէն՝ Պուլկարիա .
Արեւմուտքէն և Հարաւէն՝ Թուրքիա . Արեւելքէն՝
Սեւ ծով :

Հ . Արեւելեան Բուլմէլի վրայ ի՞նչ գիտես .

Պ . Արեւելեան Բուլմէլի Ինֆրոբես ՆԱՀԱՆԳ մ'է : Կը
կառավարուի Քրիստոնեայ ԿՈՒՍԱԿԱԼՈՎ մը , որ Օսմա-
նեան Տէրութեան կողմանէ կ'անուանուի :

Հ. Արեւելեան Րուսիայի բնակիչն ո՞րչափ է .

Պ. Արեւելեան Րուսիայի բնակիչն է 854,000 :

Հ. Արեւելեան Րուսիայի մայրաքաղաքն և գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Արեւելեան Րուսիայի մայրաքաղաքն է Ֆիւլիա՞ Մարիճա գետին վրայ վաճառաշահ և ծաղկեալ հին քաղաք մ'է . ունի բրդեղէն գործուածներ : Բնակչաց թիւն է 33,000 , որոց մէջ կան թուրքախօս սակաւաթիւ Հայեր :

Գլխաւոր քաղաքներն են Իսլիմիէ՝ Պալքանի ստորոտն կառուցեալ՝ ունի ասուոյ գործարաններ և մեծ տօնավաճառ : Պազարեք՝ Մարիճա գետին վրայ շինուած՝ կ'արտադրէ ցորեն , գարի և գինի : Պուրկազ՝ Սև ծովու վրայ կառուցուած՝ Արեւելեան Րուսիայի գլխաւոր նաւահանգիստն է : Քրզանք՝ նշանաւոր է իւր վարդի իւղովն :

Հ. Կիրիտ ո՞ր է , և ի՞նչ գիտելիք ունի .

Պ. Կիրիտ Միջերկրականի մէջ մեծ կղզի մը , և Օսմանեան կայսրութեան ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ մին է : Ունի առանձին կարգեր և օրէնքներ . կը կառավարուի Քրիստոնեայ ԿՈՒՍԱԿԱԼՈՎ մը , զոր Օսմանեան Տէրութիւնը կ'ընտրէ : Բնակչաց թիւն է 270,000 :

Գլխաւոր քաղաքներն են Քանիսիա՝ ծովեզերեայ և բերդաւոր նաւահանգիստ մ'է : Քանիա (Հանիա)՝ ծաղկեալ և վաճառաշահ քաղաք մ'է : Ռեքիմօ՝ կղզւոյն Հիւսիսային կողմը ծովեզերեայ քաղաք մ'է :

Հ. Սուսամ ի՞նչ նահանգ է .

Պ. Սուսամ Արշիպեղագոսի մէջ Ասիական եզե-
րաց մօտ կղզի մը և Օսմանեան կայսրութեան Ռեթ-
սօրէն ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ մին է : Կը կառավարուի Քրիս-
տոնեայ ԿՈՒՍԱԿԱԼՈՎ մը , որ Թուրքիոյ կողմէն կ'ընտ-

րուի : Բնակիչն է 44,000 : Գլխ. քաղաքն է Վաթիի :

Հ. Թունուզ ո՞ւր է , և սահմաններն որո՞նք են .

Պ. Թունուզ Ափրիկեան Թուրքիոյ Արեւմտեան
կողմն է : Սահմաններն են . Հիւսիսէն՝ Միջերկրական
ծով . Արեւմուտքէն՝ Ալճէրի . Հարաւէն՝ Սահա-
րա . Արեւելքէն՝ Թարապղուս և Քապէսի ծոց :

Հ. Թունուզի բնակիչն ո՞րչափ է .

Պ. Թունուզի բնակիչն է 2,000,000 :

Հ. Թունուզի գլխաւոր քաղաքներն որո՞նք են .

Պ. Թունուզի գլխաւոր քաղաքներն են Թու-
նուզ , Քէրուան , Քապէս :

Հ. Պոսնա-Հէրսէք ո՞ւր է .

Պ. Պոսնա-Հէրսէք Եւրոպական Թուրքիոյ Արեւ-
մտեան ծայրն է : Բնակչաց թիւն է 1,150,000 :

Գլխաւոր քաղաքներն են Պոսնա-Սէրայ , Պան-
եպոլֆա , Մօսթար :

Հ. Կիպրոս ո՞ւր է .

Պ. Կիպրոս Միջերկրականի Արեւելեան կողմը
մեծ կղզի մ'է : Բնակչաց թիւն է 200,000 :

Գլխաւոր քաղաքներն են Լարնաֆա , Լէվֆօզիա :



ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հ. Թուրքիոյ հպատակ Հասարակութեանց կարգին մէջ Հայք ի՞նչ աստիճանի կը վերաբերին .

Պ. Թուրքիոյ հպատակ Հասարակութեանց կարգին մէջ Հայք Յոյներէ յետոյ կը վերաբերին առաջին աստիճանի :

Հ. Թուրքիոյ Հայոց թիւն ո՞րչափ է .

Պ. Թուրքիոյ Հայոց թիւն է 2,000,000 (յեւրոպական Թուրքիա՝ 180,000 . յԱսիական Թուրքիա՝ 1,800,000 . յԱփրիկեան Թուրքիա՝ 20,000) :

Հ. Թուրքիոյ Հայոց գրաղումն ի՞նչ է .

Պ. Թուրքիոյ Գաւառական Հայոց ամենաստուար մեծամասնութեան գրաղումն է երկրագործութիւն . փոքր մաս մը կ'գրաղի առեւտրով եւ աննշան մաս մը վաճառականութեամբ :

Իսկ Կ. Պօլսոյ Հայոց գլխաւոր գրաղումն է առեւտուր եւ արհեստ . կայ մաս մը , որ սեղանաւոր եւ վաճառական է եւ փոքր մաս մ'ալ պաշտօնեայ :

Հ. Թուրքիոյ Հայոց կրթական վիճակն ի՞նչպէս է .

Պ. Թուրքիոյ Հայոց կրթական վիճակն ըստ բաւականին զարգացեալ է : Կայսերական Կառավարութեան արտօնութեանց շնորհիւ Գաւառաց եւ Կ. Պօլսոյ մէջ կան կրթական Հաստատութիւններ :

Գաւառական գլխաւոր քաղաքք ունին ընդհանրապէս համառօտ ծրագրովք նախակրթարաններ . բաց յայսցանէ ուրէք ուրէք կան մասնաւոր

և բարեկարգ վարժարաններ, ինչպէս են Ընկերա-
կան և Սահակեան վարժարանք՝ յԵրզնկա, Սանա-
սարեան վարժարանն՝ ի Կարին, Ս. Վարդանեան
Կրթարանն՝ յԱյնթապ:

Կ. Պօլսոյ կրթական վիճակն կը գերազանցէ
քան զգաւառացւոյնն: Ընթերցանութիւնը տա-
րածուած է ամէն կարգի անձանց մէջ. կան բազ-
մաթիւ տպարաններ, յորս կը տպուին օրաթեր-
թեր, պարբերական հանդէսներ և գրքեր: Ամէն
Թաղ ունի իւր նախակրթարանն. անպակաս են Ազ-
գային և անհատական երկրորդական վարժարանք,
որք ունին որոշ և կատարեալ ծրագիր և բարե-
կարգ վիճակ, ինչպէս. Կեդրոնական վարժարանն,
Աղջկանց Արուեստանոցն: Նշանաւոր են Պէրպէր-
եան, Մեզպուրեան, Գուրգէնեան, Տէր Սահակեան,
Միրինեան, Մէսոնեան մասնաւոր վարժարանք:

Հ. Թուրքիոյ Հայոց Բարեգործական Հաստա-
տութիւններն որո՞նք են.

Պ. Թուրքիոյ Հայոց Բարեգործական Հաստա-
տութեանց գլխաւորներն են Ազգային Ս. Փրկչեան
Հիւանդանոցն, Գալթեան Ուրբանոցն՝ ի Պօլիս. Ազ-
գային Ս. Լուսաւորչի Հիւանդանոցն՝ ի Զմիւռնիա:

* * *

Հ. Թուրքիոյ Հայ Հասարակութեան Ազգային
գործերն և Տէրութեան հետ յարաբերական խըն-
դիրներն ի՞նչ եղանակաւ կը կարգադրուին.

Պ. Թուրքիոյ Հայ Հասարակութեան Ազգային
գործերն և Տէրութեան հետ յարաբերական խըն-

դիրներն կը կարգադրուին այն վարչային դրու-
թեամբ, որ կը բղխի Օսմանեան Երջանկայիշատակ
կայսերաց և կայսերական Բարեխնամ կառավարու-
թեան, ինչպէս ուրիշ Հասարակութեանց, նոյնպէս
և Հայոց Ազգին շնորհած արտօնութիւններէն : Այս
արտօնութիւններն ամփոփուած են Սահմանադրու-
թիւն կոչուած Ազգային Օրինագրքին մէջ : Այսու
Հայ Ազգը կը կոչուի Սահմանադրական Ազգ :

Հ. Հայոց Ազգ. վարչութեան կեդրոնն ո՞ւր է .

Պ. Հայոց Ազգային վարչութեան կեդրոնն է
Ազգային Պատրիարքարանն՝ ի կ. Պօլիս :

Հ. Թուրքիոյ Հայք ներքին վարչային դրու-
թեամբ քանի՞ի կը բաժնուին .

Պ. Թուրքիոյ Հայք ներքին վարչային դրու-
թեամբ կը բաժնուին 58 մասի, որք կը կոչուին Ա-
ռաջնորդութիւն կամ Թեմ կամ Վիճակ :

Հ. Թուրքիոյ Հայոց Առաջնորդութիւններն ո-
րո՞նք են .

Պ. Թուրքիոյ Հայոց Առաջնորդութիւններն են .

Ս. Երուսաղէմ, Կոստանդնուպօլիս, Ադրիանու-
պօլիս, Ռոսնոսթօ, Նիկոմիդիա, Պրուսա, Պալքէ-
սէր-Պանսըրմա, Պիլէնիֆ, Քէօթահեա, Զմիւռնիա,
Գաղասիա, Կեսարիա, Սեբասիա, Եւդոկիա, Ամա-
սիա-Մարգուան, Շապին-Գարահիսար, Տրապիզոն,
Կարին, Դերջան, Երզնկա, Ակն, Արապկիբ, Խար-
բուրդ, Բայու, Մուշ, Բաղէշ, Վան, Պայագիս-Ա-
լաշկերս, Արղնի, Բաբերդ, Կամախ, Զարսաննազ,
Լիմ, Զնֆուշ, Սդերդ, Քդի, Բասէն, Տիգրանակերս,

Եդեսիա , Պաղտատ , Սիս , Ասանա , Հանրն , Զէյ-
թուն , Մարառ , Այնթապ , Ֆունուզ , Տէրէնսէ , Տիվ-
րիկ , Մաննըլըք , Մալաթիա , Եօզղատ , Հալէպ , Ան-
սիոք , Կիւրին , Աղթամար , Խիզան , Եգիպտոս :

Սոյն Առաջնորդութիւններէ զատ կայ նաեւ
Պուլկարիոյ , Արեւելեան Բուսէլիի և Միջերկրա-
կանի կղզեաց Հովուութիւններն :

Հ . Թեմօրէք ի՞նչ կազմութիւն ունին .

Պ . Ամէն Թեմ ունի նախ՝ կրօնական դասէն Ա-
ռաջնորդ մը , որ կը կոչուի Վիճակաւոր Առաջնորդ
կամ Թեմակալ Առաջնորդ , և կ'ընտրուի Ընդ-
հանուր Ժողովէն . Երկրորդ՝ Ընդհանուր Ժո-
ղով մը , ուղղակի Թեմին ժողովրդէն ընտրեալ .
Երրորդ՝ Վարչութիւն մը , որ Կրօնական և Քաղա-
քական կրկին ժողովներէն կը բաղկանայ , և Ընդհա-
նուր ժողովէն կ'ընտրուի . Զորրորդ՝ Ուսումնա-
կան , Տնտեսական , Իսասասանական , Վանօրէից
Տեսուչ Խորհուրդներ , և Ելեւսից , Կսակաց , Հի-
ւանդանոցի Հոգաբարձութիւններ , որք Վարչու-
թեան ճիւղերն են և ի նմանէ կ'ընտրուին :

Այս ժողովներէն զատ ամէն Գիւղ կամ Թաղ ,
որ եկեղեցի մ'ունի , պիտի ունենայ նաև Թաղա-
կան Խորհուրդ մը՝ Թաղին ժողովրդէն ընտրեալ :

Հ . Առաջնորդին պարտքն ու պաշտօնն ի՞նչ է .

Պ . Առաջնորդն իւր Թեմին Գաւառական Ժողո-
վոց Նախագահն , նոցա գործադիր մարմինն եւ
տեղական Կառավարութեան մօտ յարաբերութեան
միջնորդ է :

Իւր պարտքն է գաւառին մէջ Ազգային Սահմանադրութեան և Կեդրոնական Վարչութենէ սահմանեալ Օրինաց և Հրահանգաց անթերի գործադրութեան հսկել:

Հ. Ընդհանուր Ժողովոյ պաշտօնն ի՞նչ է .

Պ. Ընդհանուր Ժողովոյ պաշտօնն է հսկել Առաջնորդին և Վարչութեան կրկին Ժողովոց վերայ, համար պահանջել Վարչութենէ, ելմբտացոյց պատրաստել, Ազգային տուրք որոշել, Վարչութեան կարողութենէ և իրաւասութենէ վեր եղող խնդիրներն որոշել, Սահմանադրութեան և Կեդրոնական Հրահանգաց գործադրութեան հսկել:

Հ. Վարչութեան պարտքն ի՞նչ է .

Պ. Վարչութեան պարտքն է նախ՝ առ Տէրութիւնն՝ Ազգը կատարելապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահել. Երկրորդ՝ առ Ազգն՝ Ազգին բարեկարգութեան եւ յառաջդիմութեան փոյթ տանիլ, Տեսուչ Խորհրդոց և Հոգաբարձութեանց կողմէ մատուցուած ազգօգուտ առաջարկութիւններն ուշադրութեան առնել և գործադրել. Երրորդ՝ առ Աթոռն Էջմիածնի՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ կրօնական կանոնաց և օրինաց համեմատ վարուիլ:

Հ. Տեսուչ Խորհրդոց և Հոգաբարձութեանց պարտիքն ի՞նչ են:

Պ. Տեսուչ Խորհրդոց և Հոգաբարձութեանց պարտիքն են. իրենց ձեռնհասութեան վերաբերեալ խնդիրներն կարգադրել, և ի հարկին իրենց

կարծիքն ու որոշումն տալէ յետոյ յայտագրել վարչութեան պատկանեալ ժողովին :

Հ. Թաղական Խորհրդոյ պարտքն ի՞նչ է .

Պ. Թաղական Խորհուրդն իւր Թաղին եկեղեցին և դպրոցն կը մատակարարէ , պղքատներն կը խնամէ , և Թաղին Ազգայնոց գործերն ու վէճերն կը կարգադրէ : Համարատու է առ վարչութիւնն :

Հ. Թուրքիոյ Առաջնորդութեանց ամենէն գլխաւորն ո՞րն է .

Պ. Թուրքիոյ Առաջնորդութեանց մէջ կրօնական տեսակէտով առաջինն է Ս. Երուսաղիմայ Առաջնորդութիւնը . իսկ քաղաքական տեսակէտով ամենէն բարձրն է Կ. Պօլսոյ Առաջնորդութիւնը : Այս երկու Առաջնորդութիւնք իրենց դրից և նըշանակութեան բարձրութեամբ կը կոչուին Պատրիարքոսթիան , և իրենց Առաջնորդք՝ Պատրիարք :

Հ. Կ. Պօլսոյ Պատրիարքն Գաւառական Առաջնորդաց վրայ ի՞նչ գերազանցութիւն ունի .

Պ. Կ. Պօլսոյ Պատրիարքն Թուրքիոյ ամէն Առաջնորդաց գլխաւորն ըլլալով ի վերուստ կը հսկէ բոլոր Առաջնորդաց և Գաւառական ժողովոց վրայ . այս պատճառաւ Կ. Պօլսոյ Ընդհանուր ժողովն կ'ընտրուի ո՛չ թէ միայն Կ. Պօլսէն , այլ և համայն Թեմօրէից Ընդհանուր ժողովներէն : Այս ընտրութեամբէից Ընդհանուր ժողովներէն : Այս ընտրական եղանակաւ Կ. Պօլսոյ Թեմակալ Առաջնորդն , այն է Պատրիարքն , ամբողջ Թուրքիոյ Հայոց Առաջնորդն է :

Հ. Կ. Պօլսոյ Պատրիարքն ի՞նչ պարտք և ի-

րաւունք ունի .

Պ . Կ . Պօլսոյ Պատրիարքն իւր Թեմին մէջ Թեմակալ Առաջնորդի իրաւունքն ու պարտքն ունենալէ զատ ունի ուրիշ ընդարձակ արտօնութիւններ : Այսպէս Պատրիարքն Գրոհի է Պատրիարքարանի , Վերատեսուի է ամենայն վիճակաց , իւր ձեռաց մէջ ունի համայն Առաջնորդաց և համայն Գաւառական Ժողովոց ղէկն , Ազգին Ներկայացոցիչն է՝ Տէրութեան մօտ , Կայսերական հրամանաց գործադրութեան Միջնորդն է՝ Ազգին մօտ , պատասխանատու է առ Տէրութիւնն՝ Ազգին համար , պատասխանատու է առ Ազգն՝ Ազգային խնդրոց համար :

Հ . Թուրքիոյ Հայք ի՞նչ վիճակի մէջ են .

Պ . Թուրքիոյ Հայք ուրիշ Հասարակութեանց նման կը վայելեն արտօնութիւններ , որոց շնորհիւ անեղծ և անվթար պահած են իրենց լեզուն , կրօնն ու ազգութիւնն : Մեր Օգոստափառ Սուլթան Ապտ-իւլ-Համիտ Բ . Խան Ղազի , հպատակասէր Կայսրն հաւասար աչօք և հաւասար խնամօք կը կառավարէ և հայրաքար կը խնամէ՝ ինչպէս ուրիշ նոյնպէս Իւր Հայ հպատակներն : Ուստի մեր աւագ պարտականութիւնը պէտք է լինի միշտ աղօթել վասն անսասան յարատեւութեան Օսմանեան փառապանծ Կայսրութեան :



Ս Ը Հ Մ Ա Ն Ա Կ Ի Յ Ե Ր Կ Ի Ր Ք

Ա Ն Դ Ր Կ Ո Վ Կ Ա Ս

Հ. Անդրկովկաս ի՞նչ երկիրներէ կը բաղկանայ ,
և սահմաններն որո՞նք են .

Պ. Անդրկովկաս կը բաղկանայ Կովկաս լեռանց
Հարաւային կողմը գտնուած երկիրներէն : Սահ-
մաններն են . Հիւսիսէն՝ Եւրոպական Ռուսիա . Ա-
րեւմուտքէն՝ Սև ծով . Հարաւէն՝ Ասիական Թուր-
քիա և Պարսկաստան . Արեւելքէն՝ Կասպից ծով :

Հ. Անդրկովկասու մէջ ի՞նչ լեռներ կան .

Պ. Անդրկովկասու մէջ գտնուած միակ լեռն է
Կովկաս , որ Սև և Կասպից ծովերուն մէջ Արևել-
քէն յԱրևմուտս կը տարածուի . ունի բազմաթիւ
ճիւղեր և մշտակայ ձեամբ ծածկուած գագաթներ .
գլխաւորներն են Էլպրուս՝ Պարսկաստանի սահ-
մանին վրայ : Արարատ կամ ըստ մեզ Մասիս , որ
5,100 մեթր բարձրութեամբ երկու ճիւղապատ
գագաթներէ կը բաղկանայ :

Հ. Անդրկովկասու գետերն և լիճերն որո՞նք են .

Պ. Անդրկովկասու գլխաւոր գետերն են .

Կուր՝ Կասպից ծովը կը թափի : Երասի կամ
Արաքս՝ Կուր գետի մէջ կը թափի : Ախուրեան (Ար-

ափա - Չայ) , Մեծաւօր , Հրազդան՝ Երասխի մէջ կը
թափին : Ճորոխ , Ռիօն՝ Սեւ ծովը կը թափին :

Գլխաւոր լիճերն են Սեւանայ լիճ (Կէօֆ-Չայ) ,
Ծովակն , Փառաւան , Խանչարլը , Թոււման :

Հ . Անդրկովկաս ի՞նչ կլիմայ ունի .

Պ . Անդրկովկասու մէջ բարձր լեռներ գտնուե-
լով թէև ունի բարեխառն կլիմայ մը , բայց ձմեռը
չատ ցուրտ և ամառը շատ տաք կ'ընէ :

Հ . Անդրկովկաս ի՞նչ բերք կ'արտադրէ .

Պ . Անդրկովկաս հարուստ , բարեբեր և հանքա-
յին երկիր մ'է . կ'արտադրէ արմտիք , մրգեղէն ,
մետաքս , բուրդ , գինի : Ունի երկաթի , պղնձի ,
կապարի , քարիւղի , աղի և ծծումբի հարուստ
հանքեր :

Հ . Անդրկովկասու բնակիչն ո՞րչափ է .

Պ . Անդրկովկասու բնակիչն է 4,000,000՝ Ռուս ,
Հայ , վրացի , Չէրքէզ , Պարսիկ Ազգերէ :

Հ . Անդրկովկաս ո՞ր Տէրութեան կը վերաբերի ,
և ի՞նչ բաժանումներ ունի .

Պ . Անդրկովկաս կը վերաբերի Ռուսիոյ Տէրու-
թեան : Կը բաժնուի հետեւեալ եօթն նահանգաց .
Թիֆլիզ , Խուքայիս , Եղիսաբեթուպօլիս , Պաֆու ,
Երեւան , Կարս , Պաթում :

Հ . Անդրկովկաս ի՞նչպէս կը կառավարուի .

Պ . Անդրկովկասու նահանգաց կառավարու-
թիւնը յանձնուած է ՆԱՀԱՆԳԱՊԵՏՆԵՐՈՒ . սոքա կա-
խում ունին ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԵՆ , որ ամբողջ կովկասու
երկիրներուն ընդհանուր ԿՈՒՍԱԿԱՆ է :

Հ. Անդրկովկասու քաղաքներն որո՞նք են .

Պ. Անդրկովկասու գլխաւոր քաղաքներն են .

Թիֆլիզ՝ Կուր գետի վրայ կառուցուած , ճաշակաւոր փողոցներով և շէնքերով գեղեցիկ քաղաք մ'է : Ունի վաճառաշահ և լուսաւորեալ վիճակ մը . կան բազմաթիւ վարժարաններ , թանգարաններ և տպարաններ : Բնակչաց թիւն է 100,000՝ Հայ , Ռուս և վրացի Ազգերէ բաղկացեալ :

Թիֆլիզու Հայք նշանաւոր դիրք մը գրաւած են . ընդհանրապէս կ'զբաղին վաճառականութեամբ . ունին հոյակապ շէնքեր , եկեղեցիներ , դպրոցներ , տպարաններ և լրագիրներ : Աստ է Ներսեսեան , Գայիանեան եւ Մարիանեան-Յովնանեան ուսումնարաններն :

Պաֆու՝ Կասպից ծովու վրայ բանուկ նաւահանգիստ մ'է : Երկաթուղւով Բօթիի հետ միացած՝ ունի բանուկ վաճառականութիւն մը . մօտերը կը գտնուին քարիւղի հարուստ հանքեր :

Պաթում՝ Սեւ ծովու վրայ նոր և ընտիր նաւահանգիստ մ'է :

Եղիսաբեթուպօլիս՝ Աղուանից Թագաւորութեան մայրաքաղաքն է . ունի հնուժիւններ : Բնակչաց թիւն է 20,000՝ մեծաւ մասամբ Թաթար :

Խուքայիս՝ երբեմն Իմէրէթի Թագաւորաց մայրաքաղաքն՝ այժմ վաճառաշահ քաղաք մ'է :

Արդուին՝ Ճորոխ գետի վրայ կառուցուած՝ 6,000 բնակչօք հայաբնակ քաղաք մ'է :

Երեւան՝ Պարսից սահմանի մօտ Հրազդան

գետի վրայ կառուցուած բերդաքաղաք մ'է . ունի եկեղեցիներ , վարժարաններ , տպարան և գրատուն : Բնակչաց թիւն է 15,000 , որ մեծ մասամբ Հայերէ կը բաղկանայ :

Երեւանէն երեք ժամ հեռի է Վաղարշապատ գիւղաքաղաքն : Աստ կը գտնուի մեր Ս . ԷԶՄԻԱԾՆԱՅ Վանքն , ուր հաստատուած է ԷԶՄԻԱԾՆԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ նախամեծար Աթոռն : Վանքն ունի Կաթողիկէ Եկեղեցի , Կաթողիկոսարան , Գէորգեան ձեմարանն , հարուստ գրատուն , ընդարձակ հողեր և Կովկասու քաղաքաց մէջ բազմաթիւ կալուածներ : Հիւսիսային կողմն է Գեղարդայ վանքն , ուր կան շատ հնութիւններ և եկեղեցիներ :

Նախիջեւան՝ պարսպապատ քաղաք , ունի բազմաթիւ հնութիւնք : Շահ-Աբաս այս քաղաքն կործանեց և բնակիչը բռնի Պարսկաստան տարաւ : Բնակչաց թիւն է 7,000՝ մեծ մասամբ Թաթար :

Աղեփսանդրուպօլիս՝ Ախուրեան գետակի վրայ ամուր և նոր քաղաք մ'է : Բնակչաց թիւն է 20,000՝ գլխաւորաբար Հայերէ բաղկացեալ . սոցա մեծ մասը Կարնոյ կողմէն գաղթած են : Հարաւային կողմը կը գտնուին հին Անի քաղաքին աւերակները :

Նոր-Պայագիս՝ Սեւանայ լիճին մօտ , իւր առողջարար օդովն Երեւանայ բնակչաց ամարանոցն է :

Ախալցխա՝ Կուր գետի մօտ բարձր դիրքի մը վրայ՝ բերդաւոր և վաճառաշահ հին քաղաք մ'է : Ունի 15,000 բնակիչ՝ մեծ մասամբ Հայ , որք 1864 ին Կարապետ Արքեպիսկոպոս Բագրատունւոյն առաջ-

նորդու թեամբ կարինէն գաղթած են . ունին եկեղեցիներ , դպրոց և առաջնորդարան :

Կարս՝ կարս գետակին վրայ 10,000 բնակչօք նըշանաւոր բերդաքաղաք մ'է :

Հ . Անդրկովկասու Հայոց թիւն ո՞րչափ է .

Պ . Անդրկովկասու Հայոց թիւն է 1,000,000 :

Հ . Անդրկովկասու Հայք ուսումնական տեսակէտով ի՞նչ վիճակ ունին .

Պ . Անդրկովկասու Հայք ուսումնական տեսակէտով զարգացեալ վիճակ մ' ունին . ուսմունք և գիտութիւնք հիմնապէս ընդհանրացած է իրենց մէջ . ունին իրենց Եկեղեցական-Ծիսական , Կեդրոնական Միջնակարգ Վարժարաններն :

Հ . Անդրկովկասու Հայք ի՞նչ վարչական դըրութիւն ունին , և որմէ՞ կախեալ են .

Պ . Անդրկովկասու Հայք թուրքիոյ Հայոց նման կը բաժնուին թեմակալ Առաջնորդութեանց , և կախում ունին էջմիածնայ կաթողիկոսութենէն :

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

Հ . Պարսկաստանի սահմաններն որո՞նք են .

Պ . Պարսկաստանի սահմաններն են . Հիւսիսէն՝ Թաթարիստան , Կասպից ծով և Անդրկովկաս . Արեւմուտքէն՝ Եւրոպական թուրքիա . Հարաւէն՝ Պարսից ծոց և Օմանի ծով . Արեւելքէն՝ Պէլուճիստան և Աֆղանիստան :

Հ . Պարսկաստանի մէջ ի՞նչ լեռներ կան .

Պ. Պարսկաստանի մէջ գտնուած լեռանց գլխաւորներն են Ելզրուս՝ Հիւսիսային կողմը : Ելվէնս՝ Արեւմտեան կողմը : Լուրխսանի և Փարսիսանի լեռներն՝ Արեւմտեան կողմը :

Ելվէնտի գլխաւոր գագաթն է Տէմալէնս :

Հ. Պարսկաստանի գետերն և լիճերն որո՞նք են .

Պ. Պարսկաստանի գետերն են Զայէնդէլ՝ անապատաց մէջ կը կորսուի : Քիզիլ-Ուզէն՝ Կասպից ծովը կը թափի : Քարուն՝ Պարսից ծոցը կը թափի :

Լիճերն են Ուսիսայ՝ Արեւմտեան կողմը : Համուն՝ Արեւելեան կողմը :

Հ. Պարսկաստան ի՞նչ կլիմայ ունի .

Պ. Պարսկաստանի Հիւսիսային կողմերը լեռնային և անտառային ըլլալով բարեխառն և ցուրտ կլիմայ մը կայ : Հարաւային կողմը դաշտային և աւազուտ անապատներ գտնուելով տաք կլիմայ մը , և ամառն վատաւոյճ օդ մը կը տիրէ :

Հ. Պարսկաստան ի՞նչ բերք կ'արտադրէ .

Պ. Պարսկաստան ինքնին բարեբեր և հողագործութիւնը մասամբ ծաղկեալ ըլլալով , կ'արտադրէ արմտիք , թէմպէքի , բրինձ , գինի , մետաքս , բամպակ և մրգեղէն : Ունի ընտիր ձի , ուղտ , տեսակ մը ոչխար և հարուստ հանքեր :

Հ. Պարսկաստանի բնակիչն որչափ է .

Պ. Պարսկաստանի բնակիչն է 7-8,000,000՝ մեծ մասամբ Պարսիկ կայ նաեւ Քիւրտ , Թիւրքմէն , Հայ և Հրէայ :

Հ. Պարսկաստան ի՞նչ վիճակի մէջ է .

Պ. Պարսկաստան քաղաքակրթութեան և գիտութեան կողմանէ յետադէմ երկիր մ'է . սակայն արդի Շահն լուսամիտ անձ մ'ըլլալով երկիրն լուսաւորելու ամէն ջանք կ'ընէ : Արհեստք և ճարտարութիւնք արդէն ունին ծաղկեալ վիճակ մը :

Հ. Պարսկաստան քանի՞ գաւառի կը բաժնուի .

Պ. Պարսկաստան կը բաժնուի հետեւեալ 12 գաւառաց .

Մազանդարան , Կիլան , Իրագ Անէմի , Ասրպասական , Պարսիկ Քիւրսիսան , Լուրիսան , Խուժիսան , Տարսիսան , Լարիսան , Մոդեսան , Քերման , Խորասան :

Հ. Պարսկաստան ի՞նչ տեսակ Կառավարութիւն ունի .

Պ. Պարսկաստան ունի միապետական Կառավարութիւն : Թագաւորն կը կոչուի Շահ :

Հ. Պարսկաստանի մայրաքաղաքն ո՞րն է .

Պ. Պարսկաստանի մայրաքաղաքն է ԹԵՀՐԱՆ՝ ամառն ունի մնասաւար օդ մը : Բնակչաց թիւն է ամառը՝ 100,000 , իսկ ձմեռը՝ 200,000 :

Հ. Պարսկաստանի քաղաքներն որո՞նք են .

Պ. Պարսկաստանի գլխաւոր քաղաքներն են .

Իսպիք (Թէպրիզ)՝ Ուրմիայ լիճէն ոչ հեռի , վաճառաշահ և ամուր քաղաք մ'է 100,000 բնակչօք : Կան Հայեր , որք ունին եկեղեցի և վարժարան : Ատրպատականի Առաջնորդն հոս կը նստի :

Իսպահան՝ պողաբեր երկրի մը մէջ՝ Պարսկաստանի հին մայրաքաղաքն է : Ունի նշանաւոր շէն-

քեր, պալատներ, մզկիթներ և Զայէնտէհ-Ռուհի կամուրջն: Բնակիչն է 60,000:

Նոր-Ջուղայ՝ Իսպահանի մօտ է: Բնակիչք Հին-Ջուղայէն գաղթած Հայեր են. սոքա ժամանակաւ հարուստ և ծաղկեալ վիճակ մ'ունէին, բայց այժմ իրենց նախկին վիճակն կորուսած են. ունին սակայն եկեղեցիներ, դպրոցներ և վանք մը: Հնդկաստանի Հայոց Առաջնորդը հոս կը նստի:

Ուրմիայ՝ համանուն լիճին մօտ կառուցուած է. ունի 25,000 բնակիչ, որոց մէջ կան Նեստորական, Հայ և Հրեայ:

Շիրազ՝ պտղաբեր երկրի մը մէջ այգիներով շրջապատուած գեղեցիկ քաղաք մ'է: Նշանաւոր է թէմպլէին, գինին և վարդի իւղն:

Պէնսիլվանիա՝ Պարսից ծոցին վրայ բանուկ նաւահանգիստ մ'է: Պալմիրու՝ Կասպից ծովուն մօտ վաճառաչահ քաղաք մ'է 50,000 բնակչօք:

Հ. Պարսկաստանի Հայոց թիւն ո՞րչափ է.

Պ. Պարսկաստանի Հայոց թիւն է 25,000:

Հ. Պարսկաստանի Հայք ի՞նչ վարչական դըրութիւն ունին, և որմէ՞ կախեալ են.

Պ. Պարսկաստանի Հայք թուրքիոյ Հայոց նման կը բաժնուին թեմակալ Առաջնորդութեանց և կախում ունին էջմիածնայ կաթողիկոսութենէն:



İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM1074

255.07.02.01.06.00/

